

ԵՐՈՒԱՆԴ Վ. ՏԷՐ- ՄԻՆԱՍԵԱՆՑ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ


Թ Ի Յ Լ Ի Ս

ՅՏՐԱԶԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՕԼԻՑ. 7

1910

281(3)
S-46

2(9)



21v

ՄԲԸ" ԼԿ. Գ. ՄԵԴ - ԳՅՈՐԱԲԱՐԵ
ԵՐՈՒԱՆԴ Կ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ

20/X 1913.

ՋՅԻ. 6

281 (3)


Տ-46

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

8/45

A" / 6744




Թ Ի Ֆ Լ Ի Ս

ԷԼԵԿՏՐՈՆԱԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ. ՊՈԼԻՑ. 7

1910



~~1770~~



~~5799~~

22

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Խոստմանս համաձայն՝ ահա հրապարակի վրայ եմ դնում, առանձին գրքոյկով, իմ ըմբռնումը Հայոց եկեղեցու ներկայ դրութեան և նրան անհրաժեշտ կարևոր հիմնական վերանորոգութեան մասին:

Գրքոյկիս մէջ մտել են համարեա ամբողջութեամբ իմ երկու նախորդ յօդուածները նոյն խնդրի մասին, որոնցից մէկը Հայոց եկեղեցու Բարձրագոյն վարչութեան կարգադրութեամբ՝ պաշտօնական «Արարատ» ամսագրի միջից պոկուելու և այրուելու բախտին արժանացաւ: Այն, ինչ որ այդ յօդուածներում միայն հարեանցի կերպով էինք նկատել իւր ժամանակին, աշխատել ենք այս գրքոյկի մէջ աւելի մանրամասն և պարզորոշ հիմնաւորել: Խոյս ենք տուել միայն վերանորոգութեան խնդրի ծագման ու պատմութեան հանգամանքների մանրամասնութիւնները նկարագրելուց, որովհետեւ մտադիր ենք շուտով այդ խնդրին առանձին գրքոյկով դառնալու: Շատ բան ունէինք ի հարկէ դեռ ասելու այս ու այն կարևոր կէտի մասին, բայց մի կողմից չկամեցանք չափազանց ընդարձակել գրքոյկը՝ ի փաստ ընթերցանելիութեան, միւս կողմից՝ նիւթական միջոցն արդէն որոշ սահման էր գծել նրա ծաւալին:

Ինչ որ է, առանց ծածկոյթների և անըմբռնելի խորհրդաւորութիւնների, ահա մատուցանում եմ իմ ասելիքը հայ ընթերցող հասարակութեան և հոգևորականութեան ուշադրութեանը: Հայ ժողովուրդը պէտք

է դատէ, թէ ռւմ կողմն է իրաւունքը: Իսկ հայ հոգեւորականութիւնը... Ի՞նչ ասեմ. ուրիշ անգամ արդէն շէշտել եմ, որ իմ բոլոր գրածները հրապարակի վրայ են և սպասում են հայ հոգեւորականութեան քննադատութեանն ու հերքմանը: Բայց մինչև այսօր պաշտօններից զրկուելն եղաւ իմ ընկերների և իմ պատասխանը, միայն մկրատն ու կրակը խօսեցին իմ ասածների դէմ, որոնք, ինչպէս յայտնի է, համոզմունքի խնդիրներում հերքելու զօրութիւն չունին:

Յոյս ունենանք, որ դոնէ սրանից յետոյ Հայոց եկեղեցու հոգեւորականութիւնը տարրական քաղաքացիական քաջութիւն կունենայ կամ խոստովանելու իմ ասածների բացարձակ ճշմարտութիւնը և ուրեմն՝ այսուհետև հաստատուն կերպով կ'կանգնի բարեփոխութեան ճանապարհի վրայ, կամ բանական հիմունքներով և քրիստոնէական կրօնի սկզբունքների պարզաբանութեամբ ակնյայտնի կ'կացուցանէ, որ ես սխալում եմ: Միջին ճանապարհ չկայ. և եթէ այլ կերպ վարուելու լինի հայոց բարձրագոյն հոգեւորականութիւնը, հասկացողներին կ'մնայ վերջնականապէս երես դարձնել նրանից և ճշմարտութիւնն ու փրկութիւնը ուրիշ տեղ որոնել:

ԵՐՈՒԱՆԴ Վ. ՏԼԻ-ՄԻՆԱՍԵԱՆՑ.

1-ն Յունուարի 1910 թ.

Ս. Էջմիածին

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ

ԽՆԴԻՐԸ

«Հուր եկի արևանել յերկիր. և
զի՞նչ կամիմ, թէ արգէն իսկ
բորբոքէր»:

ՂՈՒԿ. ԺԲ. 49

Ա.

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Կարծաւ է Հայոց եկեղեցին վերանորոգութեան, քարեփոխութեան, թէ ոչ: Ահա մի հարց, որ տարբեր կերպով են ըմբռնում և որին տարբեր կերպով էլ պատասխանում են:

Ա. Ոմանք ասում են՝ Հայոց եկեղեցին հիմնական վերանորոգութեան կարիք չունի. նրա մէջ ժամանակի ընթացքում թոյլ վարիչների անշնորհքութեան պատճառով որոշ անկանոնութիւններ են մտել, որ պէտք է վերացնել. ուրիշն՝ կարգաւորութիւն, բայց ոչ թէ բարենորոգութիւն:

Բ. Ուրիշներն ասում են. պէտք է դուրս վանել Հայոց եկեղեցուց օտար եկեղեցիների ազդեցութեամբ մտած դանդաղ սովորութիւններ, պէտք է կարգաւորել նրա պաշտամունքը, փոքր ինչ կրճատելով աւելորդ արանութիւնները, առանց սակայն ձեռք տալու հիմնական կէտերին: Պէտք է նաև եկեղեցական կազմակերպութեան մէջ մուտք դործած խառնաշփոթութիւնն

ու անկարգութիւնները վերացնել, որպէս զի նա կըրկին իւր հին հմայքն ու փայլն ստանայ: Այդպիսիներէ համար յատկապէս անձեռնմխելի է եկեղեցական դաւանանքը. ոչ թէ այն պատճառով, որ հաւատում են կամ ճշմարիտ են համարում նրա մէջ արտայայտուած գաղափարները, այլ որովհետեւ վախենում են դրանով ազդի մէջ «պառակտումն» առաջ բերելուց և տիրող խառնաշփոթութիւնն աւելի ևս մեծացնելուց: Այդպիսիներէ համար եկեղեցին գլխաւորապէս քաղաքական մի հիմնարկութիւն է: Հակառակ դէպքում այդպիսի առարկութիւնը հիմք չէր ունենայ:

Գ. Մի ալ խումբ այն գաղափարն է պաշտպանում, թէ կրօնը տոհմասարակ, ուրեմն և եկեղեցին, այլ ևս դեր չունի կատարելու մարդկութեան կեանքի մէջ, նա անցած գնացած ժամանակների անդարգացած մշտածողութեան արդիւնք լինելով, իւր ժամանակի հետ իրապէս անհետացել է և նոր գիտութեան ու փիլիսոփայական աշխարհայեացքի առաջ գոյութիւնը պահպանել ու շարունակել չէ կարող: Նա մի մնացորդ է, աւերակ է հին ժամանակներից և կարող է այդ պատճառով միայն պատմական հետազոտութեան առարկայ լինել: Այդպիսի գաղափար ունեցողները, տեսնելով իրենց առաջ, հակառակ իրենց տեսութեան, իրական քրիստոնէական եկեղեցին, աշխատում են կամ ամեն կապ նրա հետ կտրելով իրենց տեսութիւնն արդարացնել, կամ աւելի յաճախ՝ եկեղեցու գոյութիւնը դնել առ այժմ անհրաժեշտ չարիք համարելով, ձգտում են նրա կրօնական կողմը բոլորովին ոչնչացնելով և չէզոքացնելով, նրա վերջնական անկումը արագացնել: Այդպիսիները, մեծ մասամբ հայ յեղափոխականները, Բ. կէտի ներքոյ յիշուածների գաղտնի դաշնակիցներն են: Քանի որ եկեղեցին իրաւական գոյութիւն ունի և որոշ արտօնութիւններ ու իրաւունքներ է վայելում, պէտք է օգտուել նրանից կուտուրական

նպատակների համար, առանց սակայն թոյլ տալու, որ եկեղեցին վերանորոգուի, բարեփոխուի, ընկղմուի իւր խակական նպատակի մէջ, որովհետեւ «եկեղեցին խաւարային մի զօրութիւն է», որ իբրեւ խոչընդոտ կանգնած է մարդկային մտածողութեան ու զործունէութեան ազատ թռիչքի առաջ: Այդ պատճառով էլ այսպիսիներն ասում են. իբրեւ խաւարի և յետադիմութեան պաշտպան և ժողովուրդ ստրկացնող՝ բարեփոխուած եկեղեցին ամենից աւելի վտանգաւոր է. դրա համար էլ պէտք է ամեն կերպ արգելք հանդիսանալ նրա վերակենդանութեանը, որպէս զի նա անկեալ դրութեան մէջ մնալով՝ ինքն իրեն մեռնի, անհետանայ:

Դ. խմբի սակաւաթիւ ներկայացուցիչները այն գաղափարի են, թէ Հայոց եկեղեցու վերանորոգութեան հարցի լաւագոյն լուծումը կ'լինի Հայոց եկեղեցին վերածել Ե. դարու սկզբին տիրող պարզութեան: Մի առաջարկ, որ որչափ և առաւելութիւն ունի վերեւ յիշուածների նկատմամբ, յատկապէս գաղափարի պարզութեան տեսակէտից, այնուամենայնիւ անիրագործելի է, որովհետեւ 20. դարու սկզբում այնպիսի եկեղեցական կազմակերպութիւն և բրիստոնէական կեանք առաջ բերել, ինչպէս եղել է Ե. դարու սկզբում, ոչ հնարաւոր է և ոչ էլ ցանկալի: Հնարաւոր չէ, որովհետեւ Ե. դարու պայմաններն այժմ չ'կան և արհեստական եղանակով ստեղծելն անիմաստ է և անկարելի. ցանկալի չէ, որովհետեւ 20. դարից Ե. դար վերադառնալու համար մենք շատ բան պիտի մի կողմ դնենք մեր այժմեան քաղաքակրթութիւնից, գիտութիւնից և կեանքի եղանակից, որոնք շատ մեծ արժէք ունին և հէնց բրիստոնէական քաղաքակրթութեան ու կեանքի արտադրութիւն են:

Ե. խմբին է պատկանում Հայոց ազգի տմենամեծ մասը: Այդ մեծամասնութեան համար զոյուլիւն

ունի եկեղեցին լոկ իբրև մի ծխական հիմնարկութիւն, որի հետ կապուած է նա միայն աւանդութեամբ: Ինչ որ որդին տեսել է հօրից, կատարում է ինքը և դրանով սովորեցնում իւր յետնորդներին անկէ նոյնը, առանց երբէք հաշիւ տալու, հարկաւոր էր արդեօք այդ ձևականութիւնը կատարել անպատճառ և ինչո՞ւ էր անհրաժեշտ: Այդ մեծամասնութիւնը բացարձակ կերպով և լիովին անտարբեր է դէպի եկեղեցու այս կամ այն ձևակերպութիւնը կամ ուղղութիւնը: Նա ապրում է հանգիստ իւր աւանդական նախապաշարումների և սնոտիապաշտութիւնների մէջ և եկեղեցին էլ իւր ներկայացուցիչներով հանդերձ դարձրել է այդպիսի սնահաւատութեան հովանաւորող մի հաստատութիւն: Որ սրանց համար Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը ամենևին գոյութիւն անգամ չունի, հասկանալի է ըստ ինքեան: Բայց այդ չէ նշանակում անշուշտ, թէ նոքա միշտ կ'մնան իրենց անտարբեր քնի մէջ, նաև այն ժամանակ, երբ նրանց կ'հասկացնեն, թէ ի՞նչ է ուղիղը, ճշմարիտն ու մարդավայելը:

Կլինին իհարկէ նաև այնպիսի մարդիկ, որոնք կասեն, թէ Հայոց եկեղեցին ո՛չ մի բարեփոխութեան կարօտ չէ. նա պէտք է այնպէս մնայ, ինչպէս որ կայ: Աստուծոյ հիմնած հաստատութիւնը մարդիկ փոխելու իրաւունք չունին: Այդպիսիներն այնքան կուրացած են և այնքան քարացած իրենց համոզումների մէջ, որ նրանց հետ այդ մասին խօսելն ու վիճելն իսկ անօգուտ և աննպատակ ձևոնարկութիւն կլինի: Ուրիշ մանրմունք խմբակցութիւնների մասին այստեղ յիշելն աւելորդ եմ համարում:

Ինչպէս որ ժողովուրդն է, այնպէս էլ ընականաբար նրան առաջնորդելու կոչուած հոգևորականութիւնն է: Հայոց հոգևորականութիւնն, ինչպէս յայտնի է, բաժանում է երկու տեսակի. ամուսնաւոր քահանայու-

Թիւն և կուսակիւրօն պաշտօնէութիւն: Ուրիշ եկեղեցի-
 ների մէջ հոգևորական դառնալու համար որոշ մեծ
 պատրաստութիւն ունենալ և յատուկ դպրոց անցնել է
 հարկաւոր, և այդ միանգամայն բնական է. որովհետեւ
 չի կարելի ոչ մի բանի ներկայացուցիչ դառնալ և այն
 էլ ըստ կոչման, առանց նախօրօք հիմնովին ըմբռնելու
 այն էական գաղափարներն ու հայեացքները, որոնց
 պաշտօնեան կամ քարոզիչը պիտի լինեն: Մեր եկեղե-
 ցում դժբախտաբար այդպէս չէ: Ինչպէս միւս արեւի-
 լեան եկեղեցիների ջախջախուած ու քարացած մնացորդ-
 ների, այնպէս էլ մեր մէջ հոգևորականութիւնը պատ-
 րաստուած է ամենանախնական հղանակով, որդին սովո-
 րում է հօր մօտ գրել կարդալ և մի քանի այլ անհրա-
 ժեշտ գիտելիքներ, ինչպէս մկրտութիւն անել, մեռել
 թաղել և այլն, և ահա Հայոց եկեղեցու քահանան պատ-
 րաստ է: Ծիշտ այնպէս, ինչպէս որ դարբինը իւր հօր
 արհեստն է սովորում ու շարունակում, հլւսնը իւրը
 և այլն, այնպէս էլ քահանան շարունակում է միայն
 հօր արհեստը և ուրիշ ոչինչ: Իսկ բարձրագոյն հոգե-
 ւորականութիւն կոչուածը, որի պարտականութիւնն
 էր այդ դրութիւնը վերացնելու մասին հոգ տանել,
 շարունակում է նոյն դրութիւնը պահպանել և մինչև
 անգամ քաջալիրում է: Ով որ կասկածում է վերջին
 նախագասութեան ճշմարտութեան վրայ, թող մտա-
 րել, որ դեռ 3—4 տարի առաջ հայրապետական
 ստորագրութեամբ ծխական կանոնադրութիւն հրա-
 տարակուհեց, որ մինչև այսօր էլ գործածութեան մէջ
 է և որը դիւղական քահանայի համար բաւական է հա-
 մարում երկգօսեան ծխական դպրոցի ուսումնի ու կրթ-
 թութիւնը: Ի՞նչքան ողորմելի հասկացողութիւն պէտք
 է ունեցած լինին այդպիսի կանոնադրութիւն կազ-
 մողներն ու ստորագրողները հոգևորականի պարտա-
 կանութիւնների և պաշտօնի մասին, այդ կարող է դա-
 տել իւրաքանչիւր խելահաս մարդ:

Եւ այդպիսի կանոնադրութիւն Ի. դարու սկզբին կարող է կազմուել և գործածութեան մէջ մտնել Հայոց եկեղեցու մէջ պատճառով միայն, որ պատմական համագամանքների բերմամբ Հայոց բարձրագոյն կուսակրօն հոգևորականութիւնը, որի ձեռքն է եկեղեցին ղեկավարելու պատասխանատու գործը, ոչնչով աւելի չի կարող համարուել ամուսնաւոր քահանայութիւնից: Ինչպէս որ քահանան ուսումն աստանում է և իւր պաշտօնի պարտականութիւնները սովորում իւր հօրից, այնպէս էլ կուսակրօն հոգևորականը իւր ուսումն ու գիտութիւնը աստանում էր վանական «Ժառանգաւորաց» դպրոցներում, որոնք համարեանոյնքան հեռու են ֆիզիկական կապից գիտութեան փաստակար համարուած արդիւնքներից ու եզրակացութիւններից, որքան և գիւղական քահանաները:

Այդ դրութիւնն ուղիղ ըմբոսնելու համար չ'պէտք է մոռնալ այն կարևոր պատմական հանգամանքը, որ Հայոց եկեղեցին ևս, իւր հարեան եկեղեցիների նման, ԺԳ. յատկապէս ԺԳ. դարից սկսած, բոլորովին ուժասպառ եղաւ, Սելջուկների և առհասարակ մոնղոլական արշաւանքների հետեանօք, և ընկաւ խոր քնի մէջ, որ 3—4 դար անընդհատ տևեց: Անտարբերութիւնն ու խաւարը թոթափելու համար նշանակութիւն չունեցաւ նաև Հայրապետական Աթոռը Ս. Էջմիածին տեղափոխելու դէպքը, որից յայտնի չէ, թէ ի՞նչ պատճառով Հայոց եկեղեցու պատմութեան նոր դարազուխն են հաշուում մեծ մասամբ: Իրապէս Հայոց եկեղեցու անկումն ու միջնադարեան խաւարը նոյն թանձրութեամբ շարունակուում է դեռ մինչև 17. դարու սկիզբը, երբ Մովսէս Գ. (1629—1632), Փիլիպպոս Ա. (1633—1655), Յակովբ Գ. (1655—1680) կաթողիկոսների և նրանց յաջորդների ջանքերով Հայոց եկեղեցին սկսում է արթնանալ իւր դարաւոր խոր քնից և աղջամղջի մէջ կրկին սկսում են դատ դատ լուսոյ ճառագայթներ

երևալ: Այնուհետև այստեղ ու այնտեղ եկեղեցական
 դպրոցներ են հիմնուում հոգևորականութիւն պատրաս-
 տելու համար և խաւարն սկսուում է կամաց կամաց
 փարատուել: Սակայն հեշտ չէր ի հարկէ միանգամից
 գանել այն ուղին, որով պէտք էր գնալ, Հայոց եկեղե-
 ցին կորստեան դրկից ազատելու համար. և մենք մի-
 այն երախտապարտ պէտք է լինենք մեր նախնիքնե-
 րին, որ լաւ հասկանալով խաւարի ֆլասակարութիւնն
 ու լուսոյ առաւելութիւնը, իրենց կարողութեան չա-
 փով և իրենց ժամանակի համապատասխան աշխատել
 են դարման տանել հասարակաց վերքերին: Այդ նը-
 պատակով են հիմնուել «Ժառանգաւորաց» կոչուած
 դպրոցները զանազան վանքերում և հոգևոր դպրանոց-
 ները թեմական կենդրոններում: Բայց «Ժառանգաւո-
 րաց» դպրոցները և թեմական հոգևոր դպրանոցները
 միևնոյն ուղղութիւնն ու ծրագիրը չէին կարող ունե-
 նալ բնականաբար. առաջինները վստքերում լինելով
 ունէին զուտ «կրօնական—եկեղեցական» գոյն, և գո-
 յութիւն ունէին միայն հոգևորականներ պատրաստելու
 համար, իսկ վերջինները քաղաքներում էին և պէտք է
 անհրաժեշտաբար հոգ տանէին այնպիսի ծրագրի ունե-
 նալու, որ այնտեղից դուրս եկածը թէ լաւ հոգևորա-
 կան լինէր այն ժամանակի հասկացողութեան համե-
 մատ, և թէ Հայոց եկեղեցական ծխական դպրոցների
 համար լաւ ուսուցիչներ ու պիտանի քաղաքացիներ
 պատրաստուէին: Այդ կրկնակի նպատակն էլ որոշ
 ինքնատիպ բնոյթ է տալիս մեր հոգևոր դպրանոցնե-
 րին և նրանց անյաջողութեան բուն պատճառն է: Որով-
 հետև անհնարին է իրօք միացնել ժամանակակից մար-
 դուն անհրաժեշտ և հին մտքով հոգևորականի համար
 կարևոր գիտութիւնները միևնոյն դպրոցի մէջ և պար-
 տագիր ուսանիլու նիւթ դարձնել բոլորի համար: Հէնց
 դրա համար է, որ մեր թեմական դպրանոցներից դուրս
 եկած հոգևորականները մեծ մասամբ (բացառութիւն-

ների մասին չէ խօսքը ի հարկէ) ոչ հոգևորական են և ոչ աշխարհական՝ իրենց համոզումներով ու հայեացքներով, այլ մի անորակելի խառնաշփոթութիւն ներկայացնող զանգուած: Որ այսպիսի գրութեան մէջ որոշ միանման ուղղութեամբ և հաստատուն ծրագրով հոգևորականութիւն պատրաստելու մասին խօսք լինել չի կարող և չի եղել, դրան ապացոյց է թէկուզ էջմիածնի վերջին 50 տարուայ պատմութիւնը:

Դրութիւնն աւելի ևս ծանրացաւ նրանով, որ 1870-ական թուականներից Գէորգեան հոգևոր ճեմարանի հիմնարկութեամբ մի նոր հաստատութիւն ստեղծուեցաւ «ի միջի այլոց» Հայոց եկեղեցու համար բարձրագոյն հոգևորականութիւն պատրաստելու նպատակով, բայց ճեմարանի դպրանոցական բաժնին տրուեց նոյն ծրագիրը, ինչ որ ունէին միւս թեմական դպրանոցները, իսկ լսարանական մասնագիտական բաժինը մինչև այսօր էլ անհաստատ ծրագրով և ամեն տարի փոփոխուող վարչութիւնների կամայականութեան ենթակայ մնաց: Որ այդպիսի գրութիւնից մեծ բարիք առաջ գալ չէր կարող, պէտք է պարզ լինի բոլորի համար: Ուր պակասում է հաստատուն նպատակն ու այսօրոգի դեկավարութիւնը, այնտեղից չի կարելի սպասել հասարակութեան համար պիտանի գործ: Եւ Հայոց եկեղեցու հայրապետները, որոնք կոչուած են եղել այդ՝ եկեղեցու համար առաջնակարգ նշանակութիւն ունեցող կենսական գործը դեկավարելու և Հայոց եկեղեցու պաշտօնէութիւնը պատրաստելու, շատ անգամ պարզ ըմբռնումն չեն ունեցել իրենց անելիքի մասին, երբեմն էլ անգիտութեամբ, բայց նաև գիտութեամբ օտոնահարել են և ծանր վնաս են հասցրել այն սուրբ գործին, որի յառաջագիմութեան համար աշխատելու պարտականութիւնն են յանձն առել իրենց խղճի և հասարակութեան առաջ: Չնայելով սակայն այդ բոլոր խոչընդոտներին, ճեմարանը բաւական թուով հոգևո-

րականներ տուեց, թէ ամուսնաւոր և թէ կուսակրօն, յատկապէս շնորհիւ հանգուցեալ Նահապետ եպիսկոպոս Նահապետեանի, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի և Կարապետ Կոստանեանի եռանդուն ջանքերի: Սյո մարդկանց գործունէութեանն է պարտական Հայոց եկեղեցին նաև այն, որ այսօր բաւական թուով բարձրագոյն կրթութեան տէր կուսակրօն հոգևորականունի, ժամանակակից գաղափարների տէր և նոր ուղղութեան ջերմ կողմնակից:

Վերևն ասացինք, որ ճեմարանի հիմնարկութիւնից յետոյ դրութիւնն աւելի ծանրացաւ. այդ եղաւ այն պատճառով, որ ճեմարանաւարտ հոգևորականները ի թէ մի կողմից համերաշխ էին գնում հին «ժառանգաւորաց» դպրոցի սերնդի հետ, միւս կողմից իրենց հետ բերում էին որոշ գիտակցական վերաբերմունք դէպի եկեղեցին և հասկացողութիւններ, որ մինչև այն ժամանակ անսովոր էին Հայոց եկեղեցում: Եւ այլ կերպ լինել չէր կարող. դարաւոր խոր քնից յետոյ՝ Հայոց եկեղեցին իւր հին հոգևորականութեամբ տեսնում է յանկարծ իւր առաջ կանգնած մի նոր տեսակ հոգևորականութիւն, որ ըստ մեծի մասին միայն տարադով է իրեն նման, իսկ գաղափարներն ու ձգտումները բոլորովին այլ են: Հայոց եկեղեցու հին յաջորդական «վարդապետութիւնը» կարելի է ասել այստեղ վերջանում է, և նոր տեսակ վարդապետութեան հիմքն է դրւում: Դրանով միաժամանակ պատրաստւում էր հետզհետէ հնի և նորի կռիւը հայոց եկեղեցու մէջ. և ի՞նչ բարեպատեհ հանգամանքները մինչև այսօր շարունակուած լինէին, այլ ես կ'ասկած չէր լինի, թէ ռը կողմն էր լինելու յաղթութիւնը. այսքանը միայն կարելի է հաստատապէս ասել, որ մենք այսօր ուղիղ ճանապարհի վրայ կ'իյնէինք՝ դէպի հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու վերակենդանութիւնը:

Բայց բարեպատեհ հանգամանքները ոչ միայն

չշարունակուեցան, այլ ընդհակառակն՝ բոլորովին փոխուեցին: Յայտնի չէ, թէ որտեղից, յանկարծ Հայոց բարձրագոյն հոգևորականութեան շարքն անցան և վանք մտան այնպիսի անձնաւորութիւններ, որոնք իրենց ստացած կրթութեամբ ու համոզումներով հակառակ պիտի լինէին ոչ միայն եկեղեցուն, այլ և կրօնին առհասարակ: Մինչև այսօր էլ յայտնի չեղաւ, թէ փրն է այդ մարդկանց առաջնորդող գաղափարը և ի՞նչ բանի համար են հոգևորական դարձել, որովհետև նրանք բարոյական քաջութիւն չունեցան իրենց հայեացքներով ու համոզումներով հրապարակ եղնելու: Պէտք է ենթադրիլ, որ նոցանից ոմանք փախել են կեանքից, իսկ միւսները կամեցել են «ազգային-կուտուրական», բայց ոչ թէ կրօնական գործունէութեան աւելի ընդարձակ ասպարէզ ձեռք բերել:

Հայոց եկեղեցու հին բարձրագոյն հոգևորականութիւնը, որ սկզբից և եթ անհաշտ աչքով էր նայում ճեմարանական հոգևորականութեան վրայ, այս՝ դրսից եկածներին ընդունեց իբրև դաշնակից, թէև պէտք է լաւ հասկանար, որ գաղափարների և համոզումների տեսակէտից ոչ մի ընդհանուր բան չէր կարող լինել իրեն և սրանց մէջ, եւ այսօր մենք էջմիածնում աւանատես ենք մի տեսարանի, որ անթիւ անգամ կրկնուել է պատմութեան մէջ և մարդկային կեանքում. «Անհաւատութիւն» ու անհաւատութիւնը գործում են ձեռք ձեռքի տուած»: Չէ՞ որ ճշմարտութիւնը որոնողներին միշտ ծաղրող, ոչ մի բանի չ'հաւատացող, կրօնի ամենից վատ և վտանգաւոր թշնամի Սաղուկեցիներն ու կեղծաւոր փարիսեցիներն էլ ընդհանուր թշնամու դէմ միանալու միշտ պատրաստ են եղել:

Այդպիսով՝ եթէ Հայոց հոգևորականութեան այժմեան ընդհանուր դրութիւնը բնորոշելու լինենք, պէտք է կարճ ասենք հետեւեալը. Հայոց հոգևորականութեան մեծագոյն մասը բացարձակ տգէտ է, իսկ մնացած

փոքրամասնութիւնն էլ բաժանուում է մի քանի անյարիր խմբերի, ինչպէս՝ ժառանգաւորաց դպրոցներից եկաձներ կամ մասնաւոր կրթութիւն ունեցողներ, թեմական դպրանոցներից եկաձներ, ճեմարանականներ և Վերջապէս պատահական տարրեր: Դոցա բոլորին ի մի ձուլող և մի ընդհանուր նպատակի համար գործադրող, որոշ եկեղեցական իղէալի համար աշխատող և դեկավարող Հայրապետութիւն գոյութիւն չունի: Այդ պատճառով էլ ամեն խումբը իւր իղէալի համար աշխատելով, բոլորովին մի կողմ է թողնուած ընդհանուր իղէալը՝ Հայոց եկեղեցու բարեկարգ դրութիւնն ու Հայ ժողովրդի կրօնական-բարոյական դաստիարակութիւնը: Եւ այդ դրութեան ականատես հայ ժողովուրդն էլ, որ իրաւունք ունի բոլոր անարժաններին ասպարէզից քշելով իրենց արժանի տեղը ցոյց տալու, նոյն մեռած անտարբերութեան մէջ լինելով, ինչ որ հոգեւորականութիւնը, ոչինչ չի անում, որով և ընդհանուր դրութիւնը աւելի ևս ողբալի և չարագուշակ է դառնում: Մի հոգեւորականութիւն, որի մեծամասնութիւնը ոչ մի գաղափար չունի իւր կոչման և դերի մասին, իսկ փոքրամասնութիւնը այժմեան կաղմով անընդունակ է մեծ գործ կատարելու. և մի ժողովուրդ, որի մեծամասնութիւնը թաղուած է սնոտիապաշտութեան մէջ, իսկ փոքրամասնութիւնը անտարբեր է դէպի ամեն կրօնական բան կամ անհաւատ է: Ահա Հայոց եկեղեցու պատկերը 20. դարու սկզբին:

Այստեղ ինքն ըստ ինքեան մի հարց է առաջ գալիս: Միանգամայն հասկանալի և բնական է, որ Հայ ժողովրդի մեծամասնութիւնը սնոտիապաշտութեան մէջ պէտք է մնար. որովհետեւ դարեր շարունակ տընտեսական սոսկալի ճնշման ու բռնութեան տակ հեծելով նա հազիւ կարողացել է իւր գոյութիւնը պաշտպանել և հնարաւորութիւն չէ ունեցել լոյսի և կրթութեան հոտն անդամ առնելու: Բացի այդ իւր հովիւներ-

րից չի լսել աւետարանի դէպի լոյս և կեանք տանող քարոզը և այդ պատճառով էլ ընկել է նոյն դրութեան մէջ, ինչ որ իրեն շրջապատող մահմեդականները: Բայց ինչպէս է, որ Հայ Ժողովրդի կրթուած դասի մեծամասնութիւնն էլ կամ անհաւատ է կամ բոլորովին անտարբեր կրօնական խնդիրներում: Նախ քան մեր բուն խնդրին անցնելը, անհրաժեշտ է մեզ համառօտ այդ երևոյթի պատճառներն էլ մատնացոյց անել:

Այդ խնդրում դարագլուխ է կազմում Հայոց մի մեծ հատուածի Ռուսաց տիրապետութեան ներքոյ անցնելը նախորդ ժԹ. դարու սկզբում: Ամենին յայտնի է և մանրամասն բացատրութեան ամենևին կարօտ չէ, որ այդ դէպքով Արևելեան Հայոց քաղաքակրթական զարգացման մէջ մի մեծ փոփոխութիւն տեղի ունեցաւ: Արևմտեան քաղաքակրթութիւնն ու գրականութիւնը սկսեցին այժմ շատ զօրեղ ազդեցութիւն գործել թէ անմիջապէս և թէ միջնորդապէս՝ Ռուսաց միջոցով: Իսկ այդ ժամանակ, երբ Արևելեան հայերը դարաւոր քնից զարթնած, ժԹ. դարու կիսից սկսած սկսեցին մեծ ազահութեամբ իրենց մէջ ընդունել արևմտեան քաղաքակրթութիւնը, ծանօթանալ նրա զրաւանութեան ու փրփոտփայական աշխարհայեացքին, Արևմուտքում ամենից աւելի զօրեղ կերպով իշխող ուղղութիւնը մատերիալիզմն էր, նիւթապաշտութիւնը և նրա վրայ հիմնուած աշխարհայեացքը, որ կրօնի դերը մարդկային կեանքի մէջ բոլորովին ժխտում էր և եկած էր համարում ժամանակը ամարդկութեան երեխայական շրջանի երեւակայութեան ու մտածողութեան այդ չնչին այլաբեռուած մնացորդը՝ բոլորովին անհետացնել:


Միանգամայն բնական էր, որ հայ մտաւորականութիւնը, արևմտեան այդ ուղղութեան և իւր գրականութեան հետ ծանօթանալով, ինքն էլ ընկնէր նրա զօրեղ ազդեցութեան ներքոյ և նոյն գաղափարները

սկսէր քարոզիլ մեր կեանքի մէջ: Եւ պէտք է ասել, որ նիւթապաշտութեան քարոզը մեր մէջ ևս մեծ յաջողութիւն գտաւ: Մինչև այսօր էլ Հափաղանց մեծ է նրա ազդեցութիւնը մեր նոր սերնդի վրայ և այդ է պատճառը, որ մեր մտաւորականների թէ՛ հին և թէ՛ նոր սերունդը մեծ մասամբ՝ եթէ բացարձակ թշնամի և հակառակօրէ չէ եկեղեցուն ու կրօնին, գոնէ աշխատում է նրանից հեռու և դէպի նա անտարբեր մնալ: Արդարութիւնը պահպանած լինելու համար այստեղ պէտք է յիշենք, որ մեր նոր մտաւորականների մէջ մի խումբ էլ կայ, որ աշխատում է եկեղեցական-կրօնական խնդիրներում ըստ կարելոյն մեծ ազդեցութիւն ձեռք բերել և այդ խնդիրները լուծել որքան կարելի է հակառակ եկեղեցական և կրօնական պահանջներին: Դժբախտաբար այդպիսիների նպատակն է,—և այդ իրենք էլ չեն ծածկում—, կրօնի և եկեղեցու ազդեցութիւնը բոլորովին թուլացնել և ոչնչացնել. իսկ այդ նպատակին հասնելու համար նոքա իրաւամբ կարծում են, որ ամենայաջող ձանապարհը եկեղեցական գործերի մէջ խառնուիլը և հակառակ եկեղեցու ոգու և շահի վճռելն է: Զարմանալի է միայն, ինչպէս վերին էլ ակնարկեցինք, որ այդպիսիների հետ միացած է գիտակցաբար թէ անգիտակցօրէն հայ ստորին և բարձրագոյն հոգևորականութեան մեծագոյն մասը:

Բ.

ԿՐԾՆԱԿԱՆ ՄԵԾ ԺԴՆԱԺԱՄԸ ԱՄԵՆՈՒՐԵՐ

Սակայն այն կրօնական,—գուցէ մեզ հայերիս համար աւելի յարմար և ճիշտ լինէր ասել եկեղեցական,—ճգնաժամը, որի մէջ գտնւում է այսօր մեր ժողովուրդը, առանձնայատուկ չէ միայն մեզ համար, այլ



համաշխարհային և ընդհանուր է: Դրա մասին կասկածել չի կարող ոչ ոք, ով ներկայ պատմական դրու-թիւնը և հասարակական միջավայրն ըմբռնում է: Այդ ընդհանուր ճգնաժամի յաջող լուծումը գտնելու համար ամենից առաջ անհրաժեշտ է քննել այն պատճառներն ու շարժառիթները, որոնք առաջ են բերել ճգնաժամը:

Հետեւելով գերմանացի յայտնի փիլիսոփայ Բու-դոլֆ Օյկենին, պէտք է ասենք, որ վերև յիշուած ծանր ճգնաժամը առաջ է եկել այն հանգամանքից, որ հնաւանդ սովորական մտածողութեան համաձայն գերպատմական ճշմարտութիւնը կապուել է պատմական որոշ շրջանի հետ միայն և այն միտքն է իշխող դարձել, թէ պէտք է ըստ կարելոյն անփոփոխ պահպանել արդէն մի անգամ դտած ճշմարտութիւնը և մնալ այն բարձրութեան վրայ, որին հասել ենք: Այդպիսով պատմութիւնը դառնում է բնականաբար ոչ թէ ձգտումն դէպի նոր ճշմարտութիւն, այլ անընդհատ վերադարձ դէպի հինը: Կրօնական ասպարիզում յատկապէս այդ հանգամանքը այն տեսա-կէտից մեծ նշանակութիւն ունի, որ իւրաքանչիւր կրօնի առաջին սկզբնաւորութիւնների մէջ է երևացել նրանց առանձնայատուկ էութիւնը և այդ պատճառով էլ սկզբնաւորութիւնը միշտ գլխաւոր ուղղութիւն է տուել ամբողջ շարժմանը:

Ընդունելով սակայն այդ մտքի մէջ որոշ ճշմարտութիւն, պէտք է այնուամենայնիւ ասենք, որ հասարակական կեանքի և պատմական զարգացման շնորհիւ անհրաժեշտաբար այնպիսի փոփոխութիւններ են առաջ եկել մեր մտաւոր և հոգեւոր կեանքում, որ բոլորովին վտանգաւոր կ'լինի կրօնի համար հաշուի չառնել նրանց և մտածողութեան հին եղանակը անփոփոխ պահպանել: Դրանով մենք կապում ենք մեզ համար միակ կարևոր յաւիտենական մի ժամանակաւոր մտածողութեան

հետ, որը մենք այսօր ընդունել այլևս չենք կարող-
խեղդում ենք մեր համոզմունքը և օտար ենք դարձնում
մեզ համար այն, ինչ որ ամենից աւելի մօտ է մեր
զգացմունքին ու մտքին: Գլխաւոր վտանգը այս-
տեղ սակայն այն է, որ մի տեսակ լարուած յարաբե-
րութիւն և երկպառակութիւն է ընկնում կրօնի և
մտաւոր աշխարհի մէջ և կրօնը հետզհետէ կարծես
յետ է մնում և մի տարբեր աշխարհ կազմում իրեն
համար: Այդ է պատճառը, որ կրօնը հեշտութեամբ և-
րեւում է մի աւելի սուր աստիճանի քաղաքակրթա-
կան կեանքի արդիւնը, մի զուտ մարդկային ստեղծա-
գործութիւն, որից վաղուց առաջ է անցել տիեզերա-
կան պատմական շարժումը և որը այլ ևս տեղ ունի-
նալ չէ կարող մարդկային մտաւոր կեանքի մէջ:

Հարց կարող է լինել միայն այն, թէ արդեօք
քրիստոնէութեան սկզբնաւորութիւնից յետոյ այդպիսի
հիմնական փոփոխութիւններ առաջ եկել են մարդկու-
թեան կեանքի մէջ: Սակայն այդ հարցի պատասխանը
կասկած չ'կայ որ դրական է: Արդէ քաղաքակրթու-
թեան զարգացումը ոչ միայն շատ մասնակի բաներ է
փոխել քրիստոնէութեան սկզբնաւորութեան շրջանի
համեմատութեամբ, այլ կարելի է ասել փոփոխութեան
է ենթարկել տմբողջ կեանքը: Ոչ ոքի համար կասկա-
ծելի չի կարող լինել, որ վերջին դարերը բոլորովին
շուռ են տուել հին ըմբռնողութիւնը ընտելեան, պատ-
մութեան, մարդու մտաւոր և հոգեւոր կեանքի մասին:
Բայց թողնենք ընտելեանը մի կողմ. եթէ առաջ կեանքի
ներքին էութիւնը մարդկային առանձին անհատների
փոխադարձ յարաբերութեան և անձնաւորութեան ներ-
քին կեանքի մէջ էին գտնում, այժմ չբան բոլորովին հա-
կառակ՝ ամենևին կենդրոնական նշանակութիւն չ'տալով
անձնաւորութեան և իւր ներքին կեանքին, կեանքի ընդ-
լայնացումն են պահանջում, գտնելով այն իրական ան-
հրաժեշտութիւնից բղխող մի անանձն պրոցեսսի մէջ,

լինի այն բնական, թէ հոգևոր և մարդկային կեանքը կապում են նրա հետ: Հին մարդը օրինակ մի անրացատրելի պատկառանքով հեռու էր պահում իրեն տիեզերական շրջապատից. արդի մարդը ընդհակառակն՝ ձգտում է մօտիկ յարաբերութիւն ստեղծել նրա հետ և մասնակից լինել տիեզերական կեանքին, որի մի մասնիկն է զգում ինքն իրեն: Ներկայ պանթէիստական աշխարհայեացքների մէջ այս ձգտումն է, որ ճշմարտութեան տարրեր է բովանդակում իւր մէջ և այդ տեսակ մտածողութեանն է, որ հին կրօնական կապանքները շատ նեղ են գալիս: Ահա թէ ինչից է առաջ գալիս արդի մարդկութեան մէջ բուռն տարերային ձգտումը՝ խորտակելու կրօնական հին, արդի կեանքի համար ծանր բեռ դարձած կապանքները և նրանց տեղը դնելու նորագոյն ազատ ժամանակի անկախ մտածողութիւնը:

Բայց բացի մտաւոր կեանքից, քրիստոնէութեան հիմնադրութիւնից ի վեր բոլորովին փոխուած է նաև կեանքի ձգտումն ընդհանրապէս: Երբ որ քրիստոնէութիւնը հանդէս եկաւ, իւր առաջ գտաւ մի յոգնած և իւր կարողութիւնների վրայ կասկածող և յուսահատուած մարդկութիւն: Այդ մարդկութեան տենչանքն էր կեանքի մի հաստատուն նեցուկ գտնել, այլ ոչ թէ ազատ շարժման ասպարէզ. անգործութիւն և խաղաղութիւն և ոչ թէ պայքար ու յառաջադիմութիւն. ապահովութիւն և թեթեւցումն, և ոչ թէ անկախութիւն և սեպհական պատասխանատւութիւն: Բնական էր, որ քրիստոնէութիւնը չնայելով իւր բոլոր հակառակութեանը ժամանակի պահանջներին, այդ ժամանակի ընդհանուր գոնաւորումն ստանար: Այդպիսով առաջ եկաւ մի կողմից կազմակերպութիւնն ու հեղինակութիւնը՝ Եկեղեցին, միւս կողմից ստորադասութիւնն ու հնազանդ բարեպաշտութիւնը՝ Ժողովուրդը: Ապա կատարում տրուեց նաև անտեսանելի ճշմարտութիւնը

տեսանելի կերպով պատկերացնելու ձգտմանը. հրաշալին, անըմբռնելին, կախարդականը իւր տեղն ստացաւ և քրիստոնէութիւնն էլ իւր շրջապատի արեւիկեան բազմազան կրօնների երփնեբրանդ միատերիաների և խորհրդաւոր ծիսակատարութիւնների ազդեցութեամբ, օգնութեամբ և հետևողութեամբ ստեղծեց ծէս, պաշտամունք, բարք և այլն. սակայն դեկադոնտական ժամանակին յատուկ՝ ամբողջ կեանքին կրաւորական բնոյթ տալով:

Մեզ յայտնի է, որ նոր ժամանակում այդ բոլորը փոխուել է: Այժմ տիրող ձգտումն է աշխատանքի և գործունէութեան զուարթ ցանկութիւնը, յառաջդիմութիւնը, անկախութիւնն ու պատասխանատւութեան զգացմունքը: Բնական է միանգամայն այդ պատճառով, որ հին և նոր տեսակի մտածողութեան մէջ կոնֆլիկտ առաջ գայ: Մենք չենք կարող այժմ մեր նախորդների նման յաւիտենական ճշմարտութիւնը կապել միայն մի ժամանակամիջոցի հետ, յետագաներին վերապահելով միայն անաղարտ պահպանելու և ընդօրինակելու իրաւունքը, որովհետև այդ կ'լինէր ներգործականութեան իրաւունքի ժխտումը, որից մենք հրաժարուել չենք կարող: Այն ինչ որ մենք չենք առաջ բերում ու ստեղծում, որը իւր գոյութեան համար ամենևին կախուած չէ մեր վճռից, երբէք չէ կարող մեր էութեան ամբողջ ոյժը գրաւել, մեր ամբողջ մտաւոր և հոգևոր զօրութեանը տիրանալ: Այդ պատճառով էլ ճշմարտութիւն որոնողը արդի մարդու վրայ ոչ մի տպաւորութիւն չի անում և իւր ճշմարտութիւնը ապացուցանել չէ կարողանում երբէք հինը իւր կուռ, անսասան, հաստատուն աշխարհայեացքով, որ մեզ միայն անցեալից մնացած անպէտք, զինը կորցրած ժառանգութիւն է երեւում: Դրութիւնն այնպէս է, որ մեզ ուրիշ ոչինչ չէ մնում այլ ևս, բայց եթէ խոստովանել, որ ժամանակի հոսանքն ու մարդկային յանդուգն մտքի խիզախ քննա-

դատութիւնը խորտակել է այն ամեն ձևերն ու անօթ-
ները, որոնց մէջ մինչև այսօր մենք սովոր ենք սուրբը
և յաւիտենականը ճանաչել: Խորտակուել են հին ձևերն
ու անօթները, բայց յաւիտենական ճշմարտութիւնները
իրենց զօրութիւնը դեռ չեն կորցրել և կարողութիւն
ունին նոր ձևի մէջ կրկին մի անգամ էլ աշխարհը
նուաճելու, ինչպէս հազարաւոր տարիներ առաջ: Որով-
հետեւ, ինչպէս Գեօթէն ասում է «Թո՛ղ մտաւոր քաղա-
քակրթութիւնը միշտ յառաջադիմէ, մարդկային միտքն
ընդարձակուի, որքան կամենում է. նա չի կարող եր-
բէք գերազանցել քրիստոնէութեան վեհութիւնից և բա-
րոյական քաղաքակրթութիւնից, ինչպէս այն փայլում
է աւետարանների մէջ»: պէտք է ուրիմն միայն ժա-
մանակաւորը հեռացնել նրանից, աւելի ճիշտ՝ հազցնել
նրան մեր ժամանակի զգեստը, որպէսզի նա նորից
գրաւէ մեզ մեր ամբողջ էութեամբ:

Ծանր ճգնաժամից յաջողութեամբ դուրս գալու
միակ ելքն ուրիմն այն է, որ մենք կարողութիւն ու-
նենանք հին-քրիստոնէական անկանգնելի կերպով խոր-
տակուած աշխարհայեացքի փոխարէն նորը կազմել, արդի
ժամանակի պահանջների և հասկացողութեան համա-
ձայն: Այդ անհրաժեշտ և պատասխանատու գործը կա-
տարելու ժամանակ մեր ամբողջ ջանքը պիտի լինի
ամեն կերպ աշխատել, որ զուտ, մաքուր քրիստոնէա-
կան բարոյական գաղափարները ճշ մի վիճաւ չը կրեն
և իրենց կենդրոնական տեղը բռնեն նաև նոր աշխար-
հայեացքի մէջ: Այդ նոր աշխարհայեացքի հիմքը ան-
շուշտ պիտի լինի Յիսուսի քարոզը մարդկանց
ընդհանուր եղբայրութեան և Աստուծոյ
որդիներ լինելու մասին: Հէնց այդ պատճառով էլ
երբէք չպէտք է ընկնենք այն սխալի մէջ, թէ կրօնն
առհասարակ, ուրիմն նաև քրիստոնէականը, միայն ան-
հատական խնդիր է, գործ ունի անհատի զգացումնե-
րի հետ և նպատակն է անհատի փրկութիւնը: Այդպիսի

կարծիքը սխալ է նույնիսկ ամենանախնական կրօններին նկատմամբ, ուր մնաց քրիստոնէութեան, որ բոլոր կրօնների զարգացման զաղաթնակէտն է կազմում: Ճշմարիտ է, քրիստոնէութիւնը ամենից առաջ անհատին է դիմում և նրան ստիպում հաշիւ տեսնել իւր ներքին աշխարհի հետ, իւր հոգին գտնել, որի առաջ ոչինչ է ամբողջ մարդկութեան նիւթական հարստութիւնը. բայց երբ որ մէկը արդէն իսկապէս քրիստոնեայ է դարձել, քննել է իւր ներքին աշխարհը ամեն կողմից, ճանաչել է իրեն և գտել է իւր հոգին, նա այլ ևս միայն իրեն մասին մտածել չէ կարող, այլ իւր ամբողջ կեանքն ու զօրութիւնը ստիպուած է յօժարութեամբ դնել իւր եղբայրների փրկութեան օգտին: Այնպէս որ քրիստոնէութիւնը լոկ անհատական կրօն չէ, այլ ամենամեծ չափով սոցիալական, որովհետև նրա նպատակն է Աստուծոյ արքայութիւնը՝ մարդկանց եղբայրութիւնն ու հաւասարութիւնը հաստատել հրկրի վրայ: Այդպիսի վեհ և տիեզերական նպատակի իրականացման համար անհատական ոյժերը բաւական չեն. մի ընդհանուր զաղափարն անքակտելի կապերով կապում է բոլոր միատեսակ զգացող և միևնույն պահանջն ու ըմբռնումն ունեցող անձնաւորութիւններին և դէպի մի նպատակն առաջնորդում: Եւ յիրաւի, քանի քրիստոնէութիւնը դեռ ծանր պայքարի մէջ էր մի թշնամի աշխարհի հետ, նրա մէջ իշխում էր այն զաղափարը, թէ մի ընդհանուր գործ միացնում է բոլոր ոժերը և իւրաքանչիւրը իւր տեղում, սեպհական գործով առաջ է մղում կեանքի ընթացքը: Արեւելեան եկեղեցու ամենամեծ փիլիսոփան և մտաւոր ղեկավարը՝ Օրիգենէսը այն կարծիքն է յայտնում, թէ Քրիստոսի մէջ առաջին անգամ սկսուեց Աստուածային և մարդկային բնութիւնների կատարեալ միացումը և այդպիսով մարդկային բնութիւնն Աստուածային դարձաւ ոչ միայն Յիսուսի, այլ նաև նոցա բոլորի մէջ, որոնք ընդունում են նրա-

նով սկսուած կեանքը: Ճշմարիտ հետևողը ոչ թէ միայն պիտի հաւատայ Քրիստոսին, այլ ինքը պէտք է Քրիստոս դառնայ և իւր կեանքով ու տանջանքներով ծառայէ եղբայրներին փրկութեան գործին: Քրիստոնէութեան յաղթանակից յետոյ այդ մտածողութիւնը եկեղեցական կեանքում յետ մղուեցաւ. այժմ պէտք է փոխուած պայմանների մէջ և այլ կերպով վերստին առաջ բերել այն: Որովհետև կեանքը տանջանք է, աշխարհը դառնութեան և վշտի հովիտ, իսկ քրիստոնէութեան բոլոր ոյժերի միահամուռ գործունէութեան նպատակը պիտի լինի՝ վերացնել տանջանքի խայթոցը մարդկային կեանքից, արցունքը սրբել բոլոր դէմքերից և դառնութեան ու վշտի հովիտը՝ Աստուծոյ ուրախ զուարթ որդիների ընդհանուր աշխատանքով և միմեանց գերազանցող լուրջ անձնուիրութեամբ երջանկութեան պարտէզի փոխել:

Հէնց այդ պատճառով էլ, որովհետև մէջ տեղն ընդհանուր նպատակ կայ և բոլոր ոյժերը պիտի միանան այդ նպատակն իրագործելու համար, քրիստոնէութեան համար անտարբեր բան չէ, թէ ի՞նչպիսի մտաւոր բովանդակութիւն ունի այն: Որովհետև միմեանց հետ շաղկապող ամենագօրեղ օղակը մտաւոր կապն է, որը զգացմունքի հետ միանալով արդէն բոլորովին անքակտելի է դառնում: Իսկ այդպիսի, ընդհանուրին միացնող մտաւոր կապը չի կարող լինել ի հարկէ հին ժամանակի անցած գնացած աշխարհայեացքը, այլ պիտի լինի բնականաբար նորագոյն ժամանակի զիտական բմբռնումը տիեզերքի, Աստուծոյ և մարդու մասին: Քրիստոնէութիւնը ուրեմն մտաւոր կրօն է. այդպէս է եղել նա միշտ. ապացոյց, որ նա շփման մէջ է մտել բոլոր մտաւոր շարժումների հետ և իրեն համար պէտքեկանը վերցրել նոցա միջից: Այժմ էլ մենք պէտք է նրա այդ բնաւորութիւնը ամեն կերպ պահենք, որով-

հետև առանց դորա նա իւր զօրութիւնը կ'կորցնէ և ոչ թէ ընդհանուրի կրօն կ'դառնայ, այլ ճգնաւորների կամ իրենց անհատական փրկութեան հետեւ ընկած անձնաւորութիւնների, որ ոչ Աստուծոն հաճելի լինել կարող է ոչ էլ մարդկանց է օգտաւէտ: Մենք չհնք կարող երբէք անուշադիր թողնել այն հանգամանքը, որ քրիստոնէութիւնը քաղաքակրթական կրօն է. այսինքն նա առաջ չէ եկել միայն կրօնական զգացմունքի ընդհանուր և բնական մոտիւններից, այլ այդ զգացմունքի և ժամանակի ամբողջ քաղաքակրթութեան ամենազրկւածութիւնը գործոնների միմեանց հետ ունեցած փոխադարձ յարաբերութիւնից: Մի կողմից՝ արտաքին պաշտամունքների և փիլիսոփայական վարդապետութիւնների հետ ունեցած անընդհատ բաղխմամբ ու մրցմամբ, միւս կողմից՝ հէնց քրիստոնէական համայնքների իրենց մէջ մղուած մի ներքին կռուով ու պայքարով մնուել է ու զօրացել քրիստոնէութիւնը: Եւ միայն այդ պատճառով էլ կարողացել է տիրել ամբողջ քաղաքակրթութեան աշխարհին: Եթէ նա պիտի իւր զօրութիւնը պահպանէ և նաև արդի քաղաքակրթութեան ամենաուժեղ գործոնը լինի, չի կարող հրաժարուել իւր քաղաքակրթութեան կրօն լինելու բնաւորութիւնից: Քրիստոնէական նոր աշխարհայեացքը պէտք է այդ բոլոր բաներն ի նկատի ունենայ և ըստ այնմ էլ կազմուի, որպէսզի միատեսակ մտաւոր աշխարհայեացքով և դէպի միեւնոյն նպատակը ձգտող քաղաքակրթական կեանքով միմեանց հետ անբաժանելի կերպով միացնէ քրիստոնեայ համայնքի բոլոր անդամն' ըրին:

Այդպէս վարուելով՝ յաւիտենականութեան բնորոշ նշանն այլ ևս չի լինի անշարժութիւնը ժամանակի փոփոխութիւնների հանդէպ, այլ այն ընդունակութիւնը, որ նա ժամանակի բազմազանութեան մէջ իրեն չի կորցնում, այլ ընդհակառակն ապացուցանում է իւր գերակշիռ ոյժը՝ ազատելով ժամանակը դուրս

ժամանակաւորից: Անշուշտ անհնարին կը լինի այդ դէպքում ուշք դարձնել մանրամասնութիւններ զրայ և կրօնական կեանքը բնականաբար կը դառնայ անմիջական և պարզ: Միայն այն, ինչ որ էական է և կարևոր, պիտի անմիջական կեանք դառնայ և իւր գործունէութիւնը ազատ կերպով ծաւալէ, առանց երկրորդականի և մասնաւորի հետ խառնուելու կամ կապուելու: Հէնց այս տեսակէտից է, որ քրիստոնէութեան մէջ ծանր հակասութիւններ են առջ եկել. հակասութիւններ, որոնք հիմնաւորուած են թէ՛ նրա բնութեամբ և թէ՛ պատմութեամբ: Այն, ինչ որ մի ժամանակ բոլորին հասկանալի և մինչև անգամ անհրաժեշտ է եղել, այսօր մեզ համար բոլորովին օտար է և անըմբռնելի: Այդ նկատելի է թէ՛ դաւանութեան, թէ՛ պաշտամունքի ու ծիսակատարութեան և թէ՛ առհասարակ քրիստոնէական սովորոյթի մէջ: Մեր նպատակը պիտի լինի այդ պատճառով պայքար՝ աւելի մեծ պարզութիւն և անմիջականութիւն ձեռք բերելու կրօնի մէջ, զլիաւորն ու երկրորդականը աւելի որոշ կերպով տարբերելու միմեանցից, ազատուելու քրիստոնէութեան մէջ մտած օտար և այժմ բոլորովին աւելորդ ազդեցութիւններից և այլն:

Միայն այդ հիմնական ճանապարհով հնարաւոր է կրօնական ընդհանուր ճգնաժամի յաջող լուծումը. որովհետեւ հին և նոր աշխարհայեացքների հակադրութիւնն այնքան խորն է արդէն, որ մոգեւոն մարդու մէջ դէպի քրիստոնէական կրօնը կենդանի հետաքրքրութիւն առաջ բերել կարելի է միայն հինը, անցած-զընացածը մերժելով և նոր ժամանակի համար նշանակութիւն ունեցողը պահպանելով: Իսկ եթէ մենք միամտութիւն ունենանք արդի Ի դարու մարդուն իրրեք քրիստոնէութիւն հրամցնել ներկայ աշխատուած եկեղեցին իւր մէջ կատարուած ձէսերով ու արարողութիւններով, նուիրապետութեամբ ու դոգմաներով, վա-

նական ու կրօնաւորական կեանքով և անապատական խորազնագեատ ճգնաւորներով, եկեղեցական հայրերի ճառերով ու շարականներով, «այն ժամանակ մողեռն մարդը մօղայից ընկած շորի նման դէն կը ձգի այդ կրօնը», այն ժամանակ նա իրաւունք կունենայ կրօնը համարելու «խորտակուած և ոչնչացած կամ ոչնչանալու դատապարտուած, մարդկութեան նախնական շրջանի մանկական երեւակայութեան ու սխալ մտածողութեան մնացորդ», որ գիտութեան շնորհիւ պիտի անպատճառ վերանայ աշխարհից:

Սակայն այդ համոզումը բոլորովին անհիմն է և սխալ. և եթէ մենք մի կողմից գտնուում ենք կրօնական մի ծանր ճգնաժամի շրջանում, միւս կողմից էլ չենք կարող չը նկատել, որ կրօնական հետաքրքրութիւնը հէնց մեր օրերում աւելանում է մարդկութեան մէջ և կրօնական պրոբլեմը դառնում է ամենուրեք լուրջ խորհրդածութեան առարկայ: Դրան ապացոյց են այն բազմաթիւ գեղարուեստական լուրջ փիլիսոփայական գրութեանքները, որ ամեն տարի լոյս են տեսնում արտասահմանում և Ռուսաստանում և որոնց նիւթն է կրօնական պրոբլեմը և նրա լուծումը: Այնպէս որ մենք կատարեալ իրաւունք ունենք հանդուցեալ Ֆրիդրիխ Պաուլսենի հետ պնդելու, թէ հակառակ այն երկպառակութեան, որ կայ արդի գիտութեան, և յատկապէս բնագիտութեան և հայրերից միզ աւանդութիւն մնացած քրիստոնէական կրօնի դանազան երևոյթիների մէջ, կրօնի դիրքը և հաւատի դերը այնուամենայնիւ չէ կարելի խախտուած և վերջացած համարել, այլ հնարաւոր է այն վերականգնել՝ յաւիտենականը որոշելով ժամանակաւորից: «Այնուամենայնիւ հաւատը մնում է կենդանի և մինչև անգամ ապացուցանում է կրկին ու կրկին, որ ինքն է բոլոր պատմական կենսական զօրութիւնների մէջ ամենաուժեղը: Առանց հաւատի դէպի բարին, ինչ կերպ կուզէ արտայայտուի այն՝ իբրև

հաւատ առ Աստուած և նախախնամութիւն, հաւատ դէպի յառաջագիմութիւն և զարգացում, դէպի ճշմարտութիւնն ու արդարութիւնը և նրանց անհրաժեշտ յաղթանակը,— ոչինչ մեծ և յարատեւ բան դեռ չէ ստեղծուել: Եթէ նա չէ կարող իւր առարկայի իրականութիւնը ապացուցանել, իւր գործունէութեամբ ապացուցանում է, որ ինքն իրական է: Ո՛չ մի կասկած չը կայ, որ հաւատն է եղել և ոչ թէ գիտութիւնը մինչև այժմ, ամբողջ պատմութեան ընթացքում սարեր տեղափոխողը. արգելքների սարերը, որ իւրաքանչիւր զաղափարի իրականացման հանդէպ են կանգնած: Մարդկութեան կեանքի մէջ առաջ եկած բոլոր մեծ շարժումները կրօնական սկզբնաւորութիւն ունին. պատմութեան մեծ զեկամարներին անդիմադրելի դօրութիւն պարգեւողը այն հաւատն է եղել, որ նոքա Աստուծոյ գործն են առաջ տանում և Աստուած նրանց հետ է: Եւ մենք ոչ մի պատճառ չունինք ընդունելու, որ ապագայում ուրիշ կերպ պիտի լինի: Հաւատը կորոշէ մարդկութեան ճակատագիրը գալիք դարերում էլ ճիշտ այնպէս, ինչպէս և անցեալներում. հաւատը դէպի ապագան ու բարու և արդարութեան վերջնական յաղթանակը:

Գ.

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՅԻՆ ԿՐՕՆԱԿԱՆ ՄԵԾ ԺԳՆԱԺԱՄԻ ՀԱՆԳԷՊ

Սոսկումն է պատում մարդու, երբ հայեացքը ընդհանուր քրիստոնէական աշխարհում մղուող այդ ծանր պայքարից դարձնում է դէպի քրիստոնէութեան այն փոքրիկ հատուածը, որ Հայոց եկեղեցի է կոչւում: Ի՞նչ ենք տեսնում այստեղ: Որչափ էլ մեղնում դեռ ես չափազանց պակաս է կրթութիւնն ու կրօնական ծանր պրոբլեմի մասին մտածելու ընդունակութիւնը, բայց

նոյն առանձնայատկութիւններն ու հակասութիւնները, նոյն պայքարը հնի և նորի մէջ հետզհետէ աւելի նկատելի և արդէն իսկ սպառնալից է դառնում: Եւ ողբալին այստեղ այն է, որ նոյն իսկ ուղղութիւնները չեն հասկացում, ինչպէս որ այդ յատուկ է բոլոր կիսակիրթ, քնից յանկարծ զարթնած ազգերին: Մեզնում էլ սովորութիւն է դարձել Հայոց հոգևորականութիւնը բաժանել երկու մեծ կուսակցութեան, կնքելով նրանց ազատամիտ կամ պահպանողական անուններով: Բայց այս դէպքում առաջնորդուել են բոլորովին կողմնակի գիտումներով և հիմնուել են այնպիսի բաների վրայ, որոնք բացարձակապէս ոչ մի կապ չունին յառաջագիտականութեան կամ պահպանողականութեան հետ: Այստեղ զեր են կատարել և՛ անձնական բարեկամութիւն, և՛ շահ և՛ կուսակցական կուրուքիւն. բացակայել է միայն առողջ դատողութիւնը և խնդրի էութիւնը քննելու և ըմբռնելու կարողութիւնը: Դրա անմիջական հետեւանքն այն է եղել, որ մեր կեանքում իսկական ազատամիտներն ու նորագոյն մտածողութեան ներկայացուցիչները համարուել են յետադէմ և պահպանողական, իսկ հնի և նորի մասին հասկացողութիւն անգամ չունեցողները կամ մինչև իսկ ձեռագրերի մէջ եղած սխալներով երգուողներն ու նրանց անփոփոխ պահել ցանկացողները համարուել են ազատամիտ և յառաջագէմ, այդ տիպոսը կրող լրագրերի հետ անհասկանալի թիւրիմացութեամբ ունեցած բարեկամութեան համար միայն: Այդպիսով յետ են մղուել հասկացող, հիմնական բարեփոխութիւններ և Հայոց եկեղեցու ազգային ժողովրդական վերածնութեան կուսակից տարրերն ու առաջ քաշուել հին անշարժութեան, հնաւանդ սուրբ սխալների և երանելի անբովանդակ անդորրութեան ներկայացուցիչները:

Մի կողմից հնի և նորի թշնամութիւնը, միւս

կողմից մեղնում արդէն ծայրայեղութիւնների հասած անհասկացողութիւնը կրօնական պրոբլեմի և հոգևորականութեան դերի մասին ապա այնտեղ հասցրին, որ մի ժամանակ գուցէ ներքին ոգևորութեամբ և Հայոց եկեղեցու վերածնութեան սրբազան գործին ծառայելու եռանդով կուսակրօն հոգևորականութեան ծանր լուծն իրենց վրայ առնող երիտասարդ ոյժերը հիասթափուեցան և յուսախաբ եղան, դժուարանալով այլևս մնալ այն ասպարիզում, ուր ամեն բան կայ, բացի որևիցէ մխիթարութիւնից. այն շրջանի մէջ, որի ներկայացուցիչները մեղնում անհասկանալի կերպով և յանդուգն սանձարձակութեամբ արհամարհանքի և ծաղրի առարկայ լինել կարող են, չ'նայելով իրենց բարձրագոյն կրթութեան, և անձնական շահերի յետևից ընկած, չը նայելով որ թողել են ամեն անձնական բարիք, մի իրենց տեսակէտով սուրբ նպատակի ծառայելու համար: Եւ այս բոլորն այնպիսիների կողմից, որոնք կրթութեան հոտն հաղիւ թէ առել են և իրենք իսկ ապէս ուրիշ ոչնչի չեն ծառայում, չ'նայելով բոլոր փքուն խօսքերին, բայց եթէ անհատական օգուտն ու սեպհական բարօրութեանը:

Հայկական կիսակրթութեան այդպիսի վերաբերմունքի պատճառով է նաև մասամբ, որ այժմ ոչ միայն քրիստոնէական կրօնը վերև նկարագրած իմաստով, այլ նաև յատկապէս Հայ հոգևորականութիւնը գտնուում է մի ծանր ճգնաժամի մէջ. այնպիսի ճգնաժամ, որից դուրս գալ հնարաւոր է միայն հասկացող տարրերի աշակուրջ և սրտացաւ բարեացակամութեամբ ու օգնութեամբ: Ի՞նչ է այս բոլորիս Հայոց ամբողջ հոգևորականութեան դրութիւնը: Այդ մասին գրքոյկիս սկզբում արդէն խօսք եղաւ, բայց այստեղ կամենում ենք խնդիրը շոշափել սկզբունքի տեսակէտից:

Իւրաքանչիւր եկեղեցական կեանքով հետաքրքրւողի և հոգևորականութեան դերն ու նշանակու-

Թիւնը փոքր ի շատէ ուղիղ ըմբռնողի համար պարզ
 պէտք է լինի միանգամայն, որ հոգեւորականու-
 թիւնը այն մտքով պաշտօնէութիւնն է և չը
 պիտի լինի, ինչպէս հասկացուած է այն մե-
 ղանում և է իրականութեան մէջ: Իսկապէս
 ասած՝ քրիստոնէական կրօնի մէջ չը պէտք է լինի իբրև
 առանձին դասակարգ, առանձին գործունէութեամբ
 հոգեւորականութիւն: Որովհետև հոգեւորականի կամ քա-
 հանայի գաղափարը յատուկ է այն բոլոր կրօններին,
 որոնց հասկացողութեամբ մարդը որևէ Աստուծոյ մօ-
 տենալ և անմիջական հաղորդակցութեան մէջ մտնել
 նրա հետ անկարող է, առանց միջնորդի: Այդ միջնոր-
 դը հոգեւորականն է կամ քահանան, որի պարտակա-
 նութիւնն է գիտենալ, թէ ինչպիսի միջոցներով ու
 գործողութիւններով կարելի է այս կամ այն Աստծուն
 լաւ տրամադրել դէպի մի անձնաւորութիւն կամ գործ:
 Հէնց այդ հասկացողութիւնից էլ բխում է զոհի կամ
 պատարագի անհրաժեշտութիւնը, որ մի ընդարձակ
 գործողութիւն էր և ամեն ոք իմանալ ու կատարել
 անկարող էր: Դրա համար էլ քահանայի և զոհի գա-
 ղափարները միշտ միանում են: Սակայն քրիստոնէու-
 թեան մէջ այդ բոլոր խնդիրներն ինքն ըստ ինքեան
 վերացած են: Այստեղ իւրաքանչիւր ոք, ամեն
 առանձին անհատ ուրիշ քան մօտ է իւր Աստ-
 ծուն, որքան միւսը և կարիք չունի ոչ մի
 միջնորդի. նա կարող է միշտ անմիջական յարա-
 բերութեան մէջ մտնել իւր Աստուծոյ հետ, և դրա հա-
 մար ոչ զոհ է պէտք և ոչ քահանայ: Իսկ եթէ այժմ
 բոլոր քրիստոնէական եկեղեցիներում, ուրեմն նաև
 մեզնում հոգևոր զինուորութիւն՝ քահանայութիւն կայ,
 այդ ոչ թէ իղէալ պէտք է համարել, քրիստոնէական
 հասկացողութեամբ անկումն այն իղէալից, դէպի որը
 վերադառնալ անհրաժեշտ է: Շատ հեռու կը տանի
 մեզ պարզել, թէ ինչպէս է եղել, ինչպիսի աղբյուր-

թիւններով է անհրաժեշտաբար առաջ եկել այնուամենայնիւ այս ձևի հոգևորականութիւնը քրիստոնէական եկեղեցու մէջ: Դրա համար մենք ստիպուած պիտի լինէինք ամբողջ եկեղեցական վարչական կադմակերպութեան ծագումը նկարագրել, որ անհնարին է այստեղ և կարևոր էլ չէ: Յիշենք միայն այն չափազանց բնորոշ փաստը, որ հին եկեղեցում, Ա. Բ. և Գ. դարերում քրիստոնեաները պարծենում էին իրենց «ընդհանուր քահանայութեան» գաղափարով, որ յիշաւի տարբերում էր նոր կրօնը բոլոր հներէից: Բայց գլխաւոր խնդիրը այստեղ մեզ համար այն չէ, թէ ինչպէս է առաջ եկել մի հաստատութիւն, այլ աւելի այն, թէ կարևոր է նա այսօր էլ. և եթէ այո՛, արդեօք այն ձևով ինչպէս որ կա՞յ, թէ հիմնական փոփոխութիւններ են պէտք:

Մենք արդէն ասացինք, որ զուտ քրիստոնէական սկզբունքով առանձին քահանայական դասակարգ պէտք չէ և գոյութիւն չը պէտք է ունենայ, որովհետեւ Յիսուս Քրիստոսի շնորհիւ ամեն քրիստոնեայ առանց որևէ միջնորդի յարաբերութեան մէջ կարող է մտնել իւր Աստուծոյ հետ. ուրեմն միայն ընդհանուր քահանայութեան սկզբունքն է ճշմարիտը քրիստոնէութեան համար: Եթէ այդպէս է, և այդ մասին կասկած չիսկ կարող չէ, այժմեան ամբողջ հոգևորականութիւնը միայն մի կոչում և նպատակ կարող է ունենալ. այն է՝ իբրև վարդապետ և աւետարանի քարոզիչ, կրթիչ և դարգացնիչ իրեն խնամքին յանձնուած ժողովրդին այնպէս և այն ուղղութեամբ, որ ինքը՝ հոգևորականութիւնը, ինչպէս որ կայ այժմ, աւելորդ դառնայ ապագայում: Այդ է ամենագլխաւորը և մեր բոլորիս նպատակը պիտի լինի այդ գործի համար աշխատել ոյժերի չափով:

Այստեղ արդէն շոշափում ենք Հայոց եկեղեցու ամենավիրաւոր տեղը: Ընդունա՞կ է արդեօք մեր այժ-

մեան հոգևորականութիւնը այդպիսի նպատակ ըմբռնելու և նրա համար աշխատելու: Պատասխանը բոլորիս համար պարզ կերպով բացասական կ'լինի, եթէ մտածենք, թէ ինչ է հարկաւոր այդ բանի համար ամենից առաջ: Գիտութիւն քրիստոնէական կրօնի հիմնական սկզբունքների, պատմութեան, ներկայ աշխարհայեացքի և այլն: Իսկ ո՞վ կ'պնդէ, որ այդ բոլորը Հայոց հոգևորականութեան մէջ—անհատների մասին չէ խօսքը—ամենաչնչին չափերով անգամ տարածուած է: Այն ինչ պարզ է, որ պատմական դարգացման շնորհիւ առաջ եկած հայեացքներն ու հիմնարկութիւնները միայն այն ժամանակ կարող են յաղթահարուել և ասպարէզից դուրս ելնել, երբ ամենի համար որոշ կլինի, թէ ի՞նչ պէտք է, ի՞նչ պատճառով և ազդեցութեամբ են առաջ եկել նոքա և իրենց ժամանակի ձր պահանջին են բաւարարութիւն տուել: Մի խօսքով՝ քրիստոնէութեան պատմութեան ուսումնասիրութիւնն է միայն, որ իւրաքանչիւրին յիրաւի ազատ կացուցանել կարող է անցեալի աւանդական կաշկանդումներից և միևնոյն ժամանակ ցոյց տալ կողմնակի կերպով, որ ամեն շրջան իւր պահանջներն ունի, որոնց բաւարարութիւն տալը պատմական անհրաժեշտութիւն է:

Մեր հոգևորականների մէջ էլ «զարգացած», «յառաջագէտ» մարդիկ շատ կան, որոնք ամեն բանի մասին գրում են, խօսում. բայց հարցրէք այդպիսի մէկին Քրիստոսի մասին, էլ չեմ ասում եկեղեցու պատմութիւնից, և դուք կ'տեսնէք, թէ ինչպիսի յուսահատական խնդրի առաջ էք կանգնած: Հայոց հոգևորականութեան մեծագոյն մասը տգէտ է բացարձակաբար. հասկացողութիւն չունի ո՛չ քրիստոնէական կրօնի և ո՛չ էլ եկեղեցու մասին. իսկ եղած «գիտուններն» էլ չափազանց մոդեռն են՝ կրօնական և եկեղեցական պատմական ու կենսական խնդիրներով հետաքրքրուելու համար: Հոգևորականութիւնը նրա համար կոչում չէ,

այլ միայն հաց մատակարարող պաշտօն։ Ոչ ոքի համար կասկածելի չէ, որ այդ մեծ ցաւին դարման անել է պէտք և զրա համար կոչուած է եկեղեցու առաջնորդական իշխանութիւնը՝ եպիսկոպոսութիւնը, հայրապետով մէկտեղ։

Յաւելով պէտք է սակայն այստեղ արձանագրենք այն հաստատուն իրողութիւնը, որ մեր եկեղեցու եպիսկոպոսական դասն ևս, ոչնչով աւելի չ'լինելով քահանայութիւնից, ընդհակառակն գիտութեամբ և անգիտութեամբ աւելի ևս ծանրացրել է զրութիւնը, բաղմացնելով տգէտ հոգեւորականների թիւը, առանց խղճի որ և է խայթ զգալու Նւայսօր ինքն ևս գտնուում է միայնապիսի դատապարտելի անհետաքրքրութեան և անտարբերութեան մէջ դէպի կրօնական-եկեղեցական ամենակարեւոր կենսական խնդիրները, որ ուղղակի ամօթ է բերում թէ իրեն և թէ այն եկեղեցուն, որի ներկայացուցիչն ու ղեկավարը լինելու բարձր պատիւն ունի։ Լռելն ու անգործ նստելը այլ ևս ծանր յանցանք է թէ հայ ժողովրդի ու հայ եկեղեցու, թէ սեպհական խղճի ու կրօնական ամենասրբազան պարտականութեան առաջ, որովհետեւ Հայոց եկեղեցին արդէն այնտեղ է հասել, այնպիսի ողբալի դրութեան մէջ է, որից մի քայլ այն կողմը կատարեալ քայքայումն ու կործանումն է։ Բայց Հայոց բարձրագոյն հոգեւորականութիւնը լուռ է և անգործ, որովհետեւ նա անընդունակ է գործի, նրա ոյժերն սպառուած են, նրան ոգևորողն ու դէպի ընդհանուր գործ մղողը Յիսուսի աւետարանն ու ժողովրդի վիշտը չէ, որովհետեւ նա քայքայուած է, կազմալուծուած և զգացմունքով ու մտքով քարացած։ Կամ գուցէ կարծում են, թէ ամեն պարտականութիւն ամենայն ճշտութեամբ կատարուած է, երբ առաջնորդը կոնսիստորիայի գործերն է այս կամ այն կերպ վարել։ Սինոդականը՝ Սինոդինը, վարդապետը՝ Հոգեւոր կառավարութեանը և այլն։ Այդ արդէն այնպիսի կուրութիւն

կ'լինէր, որի համար կ'մնար մեզ միայն Հայոց եկեղեցու վերջնական անդառնալի անկումը ողբալ:

Մեզնում առհասարակ ոչ մի բանի առաջ կանգ չին առնում եպիսկոպոսական աստիճան ձեռք բերելու համար, լինի փող, լինի խնորիք, միայն թէ ցանկացած աստիճանին հասնեն. բայց ով է մտածում, թէ այդ աստիճանի հետ պարտաւորութիւններ էլ կան կատարելու և դրանով մի ծանր պատասխանատուութիւն են վերցնում իրենց վրայ, որի համար հաշիւ պիտի տան դոնէ իրենց խղճի առաջ:

Ով որ ձգտում է և եկեղեցու տեսուչ, եպիսկոպոս է դառնում, նա պիտի կարողութիւն ունենայ ըմբռնելու ամբողջ ժամանակաշրջանի ոգին ու ուղղութիւնը, պիտի հասկանայ թէ ո՞ր է զնում ընդհանուր շարժումը, և իրեն յանձնուած նաւի ղեկն այնպէս ուղղէ, որ խաղալիկ չ'դառնալով ժամանակի տարուբեր վաղանցիկ հոսանքներին, իւրաքանչիւր նոր շարժման և հանրամարդկային զարգացման աստիճանների արդիւնքները բեղմնաւոր դարձնէ կրօնական եկեղեցական, կեանքի համար, նրանց օգտաւէտ և զօրեղ կողմերը կրօնական աշխարհայեացքին յարմարեցնելով:

Քրիստոնէական ամենամեծ զօրութեան և յաղթանակի նշանը իւր ամբողջ պատմութեան ընթացքում եղել է այդ զարմանալի ընդունակութիւնը. նա կարողացել է ընդառաջ զնալ բոլոր իրենից յետոյ սկսուող մտաւոր շարժումներին, նրանց էական և առողջ գծերը իւր մէջ է առել և այդպիսով աւելորդ դարձրել բոլոր նոր ուղղութիւնները, ասպարիզի վրայ մնալով միակ յաղթականը: Եւ իւրաքանչիւր մտաւոր շարժման ոյժը, եթէ նա արդէն քարացած դաւանանք չէ դարձել, այդ ճկունութեան և յարաշարժութեան մէջ պէտք է տեսնել:

Կա՞յ այդպիսի յարաշարժութեան ու ճկունութեան ընդունակութիւն մեր այժմեան կրօնական կեանքի մէջ:

Մինչև այժմ նկարագրածներից յետոյ այդ հարցը տալիս անգամ աւելորդ է, որովհետև այդ յատկութիւնները ամենագործող կենսունակութեան և կենդանութեան նշաններն են. իսկ մեր կրօնական կեանքը, որ ամփոփուած է մեր եկեղեցու մէջ, համարեա մեռած է բոլորովին, չ'նայելով արտաքին բոլոր հանդիսաւորութեան ուղանգահարութեան: Պէտք է մտածել այդ խնդրի մասին, գտնել այդպիսի դրութեան պատճառները և միջոցներ ձեռք առնել նոր կեանք և շինք ածնութիւն առաջ բերելու մեր եկեղեցում, եթէ նա յիրաւի թանգազին է մեզ համար: Իսկ ռւմ կ'վայելէ ամենից աւելի այդ դրութեան մասին մտածել, և ռւմ պարտականութիւնն է հաստատութիւնը կործանումից ազատելու միջոցների մասին հոգալ, եթէ ոչ եկեղեցու ղեկավար եպիսկոպոսական դասի, և առհասարակ բարձրագոյն հոգեւորականութեան: Շատ ծանր է իհարկէ այն պարտականութիւնը, որ մեր ժամանակի բնորոշ հանգամանքները դրել են մեզ վրայ, բայց այդ պարտականութիւնից խոյս տալ հանգիստ խղճով մենք չենք կարող, որովհետև այսպիսի հանգամանքներում լուրջ գործի մասին չ'մտածելը և հանգիստը ստեղծելն ու անպէտք թղթեր ստորագրելով բաւականանալը արդէն մեծ դաւաճանութիւն է դէպի եկեղեցին և կոչման ու պարտաւորութեան գիտակցութիւնը:

Եթէ Հայոց եկեղեցին պէտք է շարունակէ իւր գոյութիւնը, պէտք է կարողանայ ազդեցութիւն ձեռք բերել ժողովրդի վրայ և նրան կրթել ու դաստիարակել, դրա համար ամենից առաջ մեր եկեղեցու Հայրապետութիւնը պիտի աշխատէ նոր հոգեւորականութիւն պատրաստել: Առանց դրա մնացած բոլոր «գործերն» ու փրօն խոստումները ոչ մի արժէք չունեն և ապացոյց են միայն այն սոսկալի ներքին դատարկութեան ու անբովանդակութեան, որ տիրող է մեզնում: Ի՞նչպէս և ի՞նչ ուղղութեամբ պիտի պատրաստուի մեր պահանջած նոր հոգեւորականութիւնը.

ահա մի հարց, որի յաջող լուծումը որքան և զգուարու-
 թիւնների հետ կապուած, այնուամենայնիւ անհնարին
 չէր լինի, եթէ գործի գլուխը կանգնած լինէր մի շըր-
 ջահայեաց, ընդարձակ աշխարհայեացքի տէր, ներկայ
 գիտութեանն ու փիլիսոփայութեան հզրակացութիւն-
 ներին քաջ ծանօթ, կրօնի պատմութիւնը, փիլիսոփա-
 յութիւնն ու էութիւնը լաւ ըմբռնող մի անձնաւորու-
 թիւն: Կարելի էր գոհ լինել նաև նրանով, որ իշխա-
 նութիւն և պարտականութիւն ունեցողը՝ գործի քաշէր
 վերև յիշած կարևոր պատրաստութիւնն ունեցող մարդ-
 կանց և թոյլ տար նրանց անարգել աշխատելու այդ
 անհրաժեշտ նպատակի օգտին: Միայն այդ միջոցով
 կարելի է հայ հոգեւորականութեան ու ժողովրդի վրայ
 ծանրացած մտաւոր խաւարը փարատել, մեր կիսա-
 կիրթ ինտելլիգենցիայի գլխից խառնաշփոթութիւնը վա-
 նել և նրա մէջ նոր շարժումն՝ յեղաշրջումն առաջ բերել:
 Եթէ մի եկեղեցու մէջ տիրող չէ իսկական գիտութիւնը,
 լայն աշխարհայեացքը և կրօնի ու բնագիտութեան սահ-
 մաններն իրար հետ չ'շփոթող ըմբռնումը, այնտեղ փրկու-
 թիւն որոնելը իզուր ցնորք է: Որովհետև ժամանա-
 կի գիտութիւնից հեռու լինելը ամենամեծ
 վտանգն է եկեղեցու համար: Այդ պատճառով էլ
 շատ անմիտ և երկչոտ քաղաքականութեան է հետևում
 ամենայն եկեղեցին, ուրեմն և մերը, երբ նա զիջողաբար
 է վերաբերում զէպիսնոսիանապատմութիւնն ու սնանա-
 ւատութիւնը, այն ինչ շատ խիստ է լուրջ քննա-
 դատութեան և ուսումնասիրութեան նկատմամբ: Հէնց
 այդպիսի բանական երկչոտութիւնն է եկեղեցու անկ-
 ման ամենագլխաւոր պատճառներից մէկը: Եթէ այդ
 ուղիղ է, որ անկասկած է, ուրեմն մեր եկեղեցու նոր
 հոգեւորականութիւնը պիտի օժտուած լինի նո-
 րագոյն գիտութեամբ և ազատ քրիստոնէական աշխար-
 հայեացքով, որպէսզի կարողանայ յաջողութեամբ կա-
 տարել իւր գործը:

Այստեղ հասնում ենք արդէն մեզ հետաքրքրող հարցի բուն էութեանը: Կարճիկ է մեր եկեղեցին արդի գիտութեամբ ճոխացած հոգեւորականութիւն ունենալ, քանի որ նա իւր վրայից դէն չի ձգել անցեալի այն մնացորդները, որոնք մինչև այսօր էլ դեր են կատարում մեր եկեղեցական կեանքում, թէև, իսկապէս ասած, նրանց նշանակութիւնը բոլորովին կորել է և կամ այժմ ոչ ոքի համար հասկանալի չէ: Այդ հարցի մասին երկու կարծիք լինել կարող չէ. կրթուած, ժամանակակից գիտութեան ծանօթ մարդը այն ժամանակ միայն հոգեւորական կարող է դառնալ, երբ եկեղեցու մէջ ոչինչ չ'գտնի այդ գիտութեան հակառակ, ուրիշ խօսքով՝ ամեն ինչ համապատասխան լինի իւր մեծ չարճարանքով ձեռք բերած համոզումներին: Բացի այդ՝ իրապէս անբովանդակ ու միայն անցեալի աւանդական, այժմ անիմաստ, կարգերով ու ըմբռնումներով ապրող հաստատութիւնը չի կարող զօրեղ հետաքրքրութիւն շարժել և դէպի ինքը ձգել ժամանակակից կրթուած մարդուն:

Այդ կրիտիկական դրութիւնից դուրս գալու համար քննենք ուրեմն, թէ մեր եկեղեցական կեանքի մէջ ո՞ր կողմերն անգառնալի կերպով հնացած են և համառօտ կերպով մատնացոյց անենք այն ուղին, որով պէտք է այսուհետև ընթանալ մեր կարծիքով:

Քրիստոնէական կեանքի չորս գլխաւոր կողմերն են՝ աշխարհայեացք և դաւանանք, պաշտամունք, վարչական կազմակերպութիւն և սովորոյթ: Վերջինի մասին խօսելն աւելորդ ենք համարում, որովհետև միևնույն ժամանակահատիկում նա երկրորդական է — թէև շատ անգամ աւելի դիմացկուն և ճկուն — և նոցա հետ էլ քնականաբար փոփոխութեան է ենթարկուում: Խօսենք ուրեմն գլխաւորների մասին:

Դ.

ԵԿԵՂԵՑԱՎԱՆ ԴԱՌԱՆԱՆԵՐԸ

Ամենից առաջ քրիստոնէական եկեղեցու դաւանանքը:

Ո՞ւմ համար այսօր կասկածելի է, որ կրթութեամբ շատ շատերին յետ մոռոյ մեր կրօնից ու եկեղեցուց այդ դաւանանքն է. և մենք ստիպուած ենք խոստովանել, որ այդպիսի կրթութեամբ մեծ մասամբ իրաւունք ունեն: Նրանք տեսնում են այստեղ իրենց առաջ շատ կողմերով մի բոլորովին օտար, անըմբռնելի աշխարհ, որ յաւակնութիւն ունի միևնոյն ժամանակ ընդ միշտ իբրև յաւիտեանական ճշմարտութիւն ճանաչուելու, բոլորի համար պարտադիր. մի ճշմարտութիւն, որից շեղուողները նզովքի են արժանանում: Բայց այդ դաւանանքը կամ հաւատոյ հանգանակը կազմուել է սկսած Բ. դարուց Քրիստոսից յետոյ և իւր վերջնական կատարելութիւնն է կրել հիմնական գծերով Դ. և Ե. դարերի ընթացքում: Փիլիսոփայութեան և քրիստոնէական եկեղեցու պատմութիւնն ուսումնասիրողի համար միանգամայն պարզ է, թէ ինչպէս է առաջ ոկել այդ դաւանանքը, ինչպիսի աշխարհայեցքի և պայքարի արդիւնք է այն:

Երբ Յիսուսի աշակերտներն իրենց վարդապետի պարզ քարոզը սկսեցին տարածել ամբողջ հռոմէական պետութեան մէջ և ամեն տեղ սկսեցին քրիստոնէական համայնքներ կազմուել, ոչ ոքի մտքով չէր անցնում դեռ ևս յարմարուել աշխարհի պահանջներին, որովհետև բոլոր քրիստոնէականներն անհամբեր սպասում էին Տիրոջ երկրորդ գալստեանն հէնց իրենց օրով: Բայց սերունդ սերնդի վրայ անյայտացան երկրի երեսից ու Տէրը երկրորդ անգամ չեկաւ: Այն ժամանակ քրիստոնէութիւնն ստիպուած զգաց իրեն յարմարուելու աշ-

խարհի պահանջներին և նրա բարիքների ու իրական հանգամանքների նկատմամբ որոշ դիրք բռնելու: Դանի տարածում էր քրիստոնեութիւնը, այնքան աւելի ծանրանում էր խնդիրը, այնքան աւելի օտար տարրեր սկսում էին այս ու այն անկիւնից մուտք գործել նրա մէջ: Փոքր բաները մի կողմ թողած, մի մեծ խնդիր կանգնած էր Գ. դարուց սկսած, Դ. դարուց աւելի ծանրացած, քրիստոնեութեան դիմաց: Ի՞նչ է ասում քրիստոնեութիւնը հին աշխարհի կրթութեանը: Ի՞նչ դիրք է ընդունում դէպի հին աշխարհի փիլիսոփայութիւնն ու աշխարհայեացքը: *)

Եթէ քրիստոնեութիւնը ամեն օտար բան մերժէր իւր միջից և առանձնաբար աշխարհից, նա ամենայն հաւանականութեամբ աւելի չէր լինի, քան թէ մի հրէական հերձուած և իբրեւ այդպիսի էլ շատ շուտով կանհապանար: Բայց քրիստոնեութիւնն այնքան մեծ ներքին զօրութիւն ու ճկունութիւն ունէր, որ ամեն կողմից դէպի նա սլացող մտքերն ու գաղափարները իւր մէջ առաւ, նրանց քրիստոնեական գոյն տուեց և այդպիսով մի կողմից ինքն յարմարուելով, միւս կողմից հին աշխարհի փիլիսոփայութիւնն յարմարեցրեց իրեն: Հին յունական փիլիսոփայութեան, յատկապէս Պլատոնի և Նոր-Պլատոնական գաղափարների հետ ունեցած շատ սերտ շփմամբ ու անմիջական խորին ազդեցութեամբ է կազմուած հին քրիստոնեական աշխարհայեացքը, որ իւր կլասիկական արտայայտութիւնն է դրել «Հաւատոյ Հանգանակի» մէջ: Գ. Դ. և Ե. դարու եկեղեցական հայրերը այնքան մտքի կորով և ոյժին ունեցել, որ առանց շփութուելու և իրենց կորցնելու ծանր պայքարի մէջ, որ տեղի էր ունենում քրիստոնեութեան և փիլիսոփայութեան մէջ, իրեց սեպհա-

*) Տե՛ս այս բոլորի և հետեւեալների մասին՝ Նրուանդ վրդ. Տէր-Մինասեանց, ընդհանուր եկեղեցական պատմութիւն, Հատոր Ա. Հին Դար. էջմիածին 1908.

կան աշխարհայեացքն են կազմել: Նոքա իբրև իրենց ժամանակի որդիք չեն կարողացել բնականաբար բու-
լորովին մեկուսանալ և ազատ մնալ փիլիսոփայական
աշխարհայեացքի ազդեցութիւնից: Բայց միևնոյն ժա-
մանակ աշխատել են, որ քրիստոնէականը ոչ մի մըս
չ'կրէ դրանից: Եւ իրենց ժամանակի համար յաջողուել
է նրանց այդ անել: Այն հանգանակը, որ մենք այսօր
մեծ մասամբ առանց մտածելու և որևէ բան զգալու
անդիր ասում ենք, պէտք չէ մոռնալ, որ գրուած է
շատ ազնիւ սրտերի արիւնով: ուրեմն՝ ժամանակի խո-
րին համոզումներն ու աշխարհայեացքի արտայայտու-
թիւն է, և ոչ թէ «քահանաների կեղծիք ու անմիտ
վիճաբանութեան արդիւնք», ինչպէս կարծում են կի-
սակիրթ և տգէտ մարդիկ: Եկեղեցու պատմութիւնից
յայտնի է, որ ծանր վիճաբանութիւններին մասնակե-
ցիւ են ոչ միայն հոգևորականները, այլ երբեմն նոյն
խակ Աղէքսանդրիայի և Անտիոքի արհեստաւորները:
Մարդիկ իրենց մտքով ու սրտով կռել են իրենց հա-
մոզումը:

Եւ այդ գործում յատկապէս շատ խոշոր դեր է
կատարել փիլիսոփայութիւնը նաև այն տեսակէտից,
որ հաւատոյ ուսմունքները դաւանանքի բնաւորութիւն
են ստացել գլխաւորապէս փիլիսոփայութեան ազդե-
ցութեամբ: Եկեղեցու վարդապետները շփման մէջ մտնե-
լով փիլիսոփաների հետ, անհրաժեշտ պահանջ են
զգացել՝ իրենց համոզումները փիլիսոփաների նման
որոշ բանաձևերով արտայայտել: Մի կողմից այդ, միւս
կողմից կարծիքների տարբերութիւնն ու հերձուածնե-
րի բազմանալը՝ պատճառ է դառնում, որ քրիստոնէա-
կան եկեղեցին աշխատում է մի ընդհանուր դաւանա-
կան նորմ գտնել բոլորի համար: Չենք ուզում այստեղ
նկարագրել քրիստոնէական եկեղեցու դաւանանքի ծա-
ղումն ու զարգացումը: Ով դրանով հետաքրքրոււմ է,
կարող է կարգաւ մեր հիւսած ընդհանուր եկեղեցական

պատմութիւնը. բայց մի խնդիր շեշտել կարևոր ենք համարում, որովհետև այդ նշանակութիւն ունի մեր ժամանակի մարդու դիրքը դէպի դաւանանքը որոշելու գործում:

Քրիստոնէական եկեղեցու Աստուածաբանութեան զարգացման մէջ մեր նկարագրած շրջանում նկատուի է երեք մեծ ուղղութիւն: Այդ ուղղութիւններէց մէկը Արիստոտելի և Ստոյիկեան փիլիսոփայութեան ազդեցութեամբ ձգտում է հաւատոյ դաւանանքին բանական բացատրութիւն տալ, ռացիոնալական դարձնել: Միւս ուղղութիւն, արևելեան կրօնական պաշտամունքների և նոր պղատօնականութեան ազդեցութեամբ կամենում է նրան մի հայեցողական, երևակայութեանը մատչելի միաստիկական բնաւորութիւն տալ: Բայց այդ երկու դիւսաւոր ձգտումներին էլ հակառակ՝ երրորդ ուղղութիւնը, որ վերջ ի վերջոյ յաղթական է ելնում պայքարի միջից, ամեն կերպ աշխատում է հաւատոյ դաւանանքին բացարձակ միաստիկական դոյն տալ. այդ նշանակում է՝ հաւատոյ դաւանանքը դառնում է մի ուսմունք, որը ոչ բանականութեան միջոցով կարող է ըմբռնուել և ոչ էլ երևակայութեան միջոցով հայեցողութեան առարկայ լինել կամ պատկերացուի:

Այդ ուղղութիւնը իսկապէս բոլորովին մերժում է նախորդ երկուսին և նրա նշանաբանն է Տերտուլիանոսի խօսքը—«Gredo, quia absurdum est»—հաւատում եմ, որովհետև անըմբռնելի է»: Որպէսզի մեր ասածը աւելի լաւ հասկանալի լինի, բերենք մի օրինակ:

Եկեղեցական Աստուածաբանութեան ամենակարևոր հարցերից մէկն եղել է այն, թէ ի՞նչ յարաբերութեան մէջ է Աստուած Յիսուս Քրիստոսի և Ս. Հոգու հետ, որոնք յունական փիլիսոփայութեան նմանողութեամբ դառնում են միջնորդ էութիւններ և հաւասար են Լոգոսին (=բան) և Նուսին (հոգի, միտք): Ժամանակի փիլիսոփայութեան հասկացողութեամբ՝ տիե-

գիրքն ստեղծելուց առաջ՝ Աստուած ստեղծել է Լոգոսին և Նուսին, այնպէս որ նրանք իբրեւ ստեղծուած՝ Աստծուց տարբեր և նրանից ստորադաս միջնորդ էութիւններ են Աստծու և աշխարհի մէջ։ Սա դառնում է Գնոստիկեանների և ապա՝ Արիստականների ուսմունքը։ Միւս կողմից՝ Արիստոտէլի և հրէական միաստուածութեան հետևողութեամբ՝ քրիստոնէութեան մէջ առաջ են դալիս հերձուածներ, որոնք քարոզում են Աստուծոյ բացարձակ միիշխանութիւնը։ Այդ ուսման համաձայն՝ Քրիստոսը կամ իրական մարդ է եղել, կամ Բանն ու Ս. Հոգին պէտք է մի և նոյն Աստուածութեան տարբեր երևոյթներ համարուեն։ Բայց այս բոլոր բացատրութեան փորձերը յետ են մղուում և յաղթող է դուրս գալիս Աթանասի երրորդութեան վարդապետութիւնը, որի համաձայն՝ Աստուածութեան երեք անձնաւորութիւնները (Հայր, Որդի և Ս. Հոգի) միեւնոյն էութիւնն ունեն. ուրեմն մի միութիւն, որ միեւնոյն ժամանակ երեք է. սա ոչ զաղափարներով բացատրել հնարաւոր է ոչ էլ երևակայութեամբ ըմբռնել կարելի, բայց ընդ առաջ է գնում հաւատի այն կարիքին, որ ցանկանում է երեք զաղափարները միեւնոյն վիճութեան մէջ տեսնել և երկիւղ է կրում, թէ նրանց միացումից կ'ալակասի մէկի կամ միւսի կրօնական արժէքը։ Այդ զատճառով էլ պատահականութիւն չէ, որ այս դաւանանքին յաղթութիւն պարգևող Աթանասը եկեղեցու գիտնական գլուխներից չէր. դրա համար էլ նա ամենեւին ի նկատի չի առնում, որ իւր դոգման փիլիսոփայական տեսակէտից միանգամայն անըմբռնելի է։

Բայց ի՞նչ է հետևում այդ բոլորից։ Միթէ այն, ինչ որ մի ժամանակ ընդհանուր աշխարհայեացքի արտայայտութիւն է եղել, կարող է այսօր էլ առանց այլևայլութեան նոյնը լինել և իբրեւ յաւիտենական ճշմարտութիւն կաշկանդել մարդկանց միտքը։ Շատ հասկանալի է, որ մինչև այն ժամանակ կարող էր այդ հա-

մողումը ճշմարտութիւն համարուել, քանի որ դեռ ևս տիրող էր նրա հիմքը կազմող ընդհանուր աշխարհայեացքը: Իսկ քրիստոնէական եկեղեցու այժմեան դաւանանքի հիմքը կազմող Նոր-Պատանական փիլիսոփայական աշխարհայեացքը շատ վաղուց է, համարեա արդէն Չ. դարուց ի վեր, որ կորցրել է իւր նշանակութիւնը և կարելի է ասել ընդհանուր անհետացել: Այդ ժամանակներից ի վեր ամենամեծ, կարելի է ասել աներևակայելի փոփոխութիւններ են մտել մարդկութեան մտաւոր կեանքի, ընդհանուր աշխարհայեացքի (ներկայ ընագիտութիւնն ու աստղագիտութիւնը) մէջ, խախտելով եկեղեցական ներկայ դաւանանքը իւր էական մանրամասնութիւններով:

Արդի, նորագոյն ժամանակի քրիստոնեան իւր ազատ իրաւունքն է պահանջում աշխարհայեացք կազմելու ներկայ գիտութեան ու փիլիսոփայութեան համաձայն, և ի՞նչ որ նրա առաջ այդ տեսակէտից արգելք դնել չէ կարող և ամեն արգելք կ'լինի ի միտք քրիստոնէական եկեղեցու և կրօնի: Փոքրոգութիւն է և ծոյլ անդորրութիւն սիրելուց առաջացած մտաւոր երկչոտութիւն կարծել, թէ քրիստոնէական կրօնը դրանով կ'վտանգուի: Մեր թուլութիւնը մենք իրաւունք չունենք քրիստոնէութեանը վերադրելու: Վերջապէս պարզ պիտի լինի ամենքի համար, որ եթէ Գ. Դ. և Ե. դարերում եկեղեցական հայրերը իրաւունք ունէին քրիստոնէութիւնը յարմարեցնելու իրենց ժամանակի փիլիսոփայական աշխարհայեացքի և հասկացողութիւններին հետ, այդ նոյն իրաւունքը ունենք և մենք այսօր: Ո՛չ միայն իրաւունք է այդ, այլ մինչև անգամ մեր սրբազան պարտականութիւնն է, եթէ մենք յիշաւի քրիստոնէական կրօնի բարեկամներ ենք և ուզում ենք, որ նա գործունեայ և գերակշիռ դեր կատարէ մեր ժողովրդի կեանքում և ի՞նչ թէ ներկայ գիտական աշ-

խարհայեացքից յետ մնալով և օտարանալով, հին նախապաշարմունք և անդարձ կիրպով անհետացած մարդկային մտածողութեան անցած գնացած աստիճան համարուի:

Եզրակացութիւնն այն պիտի լինի աշուշտ, որ մենք պիտի կադմենք մեր քրիստոնէական աշխարհայեացքը, մեր դաւանանքը, անկախ և ազատ մնալով միանգամայն քրիստոնէական եկեղեցու պատմական զարգացման և աւանդութեան հանդէպ և նրանից վերցնելով միայն այն, ինչ որ արժէք ունի ներկայ ժամանակի համար: Այդ աշխարհայեացքի հիմքը կ'լինի աշուշտ, ինչպէս ասացինք, անփոփոխ կերպով առաջ էլ, այժմ էլ քրիստոնէական աւետարանական սկզբունքը՝ Յիսուսի քարոզը մարդկանց հղբայրութեան և Աստուծոյ որդիներ լինելու մասին. բայց ներկայ գիտութեան արդիւնքները աշխարհի ու տիեզերքի և մարդկանց մասին չեն կարող մոռացութեան տրուիլ: Նոցա հակառակ ոչինչ չի կարող լինել քրիստոնէական աշխարհայեացքի մէջ, որովհետեւ տիեզերքի յառաջանալու, նրա զարգացման, մարդու յառաջանալու և պատմութեան մասին ոչ ինչ չի կարող ասել կամ ոչինչ չունի ասելու քրիստոնէութիւնը, որ հակառակ լինէր արդի գիտութեանը: Կրօնն ինքն էլ մարդկային հոգու զարգացման մի արտադրութիւն է և նոյն ձևով հնթակայ զարգացման, ինչպէս բոլոր միւս երևոյթները, որովհետեւ կրօնը կեանք է, իսկ ուր կեանք կայ, այնտեղ չի կարող շարժումն, փոփոխութիւն և օրգանական զարգացումն լինել: Միայն մեռած կրօններն են վերջնական անփոփոխ ձև ստացել: Վերջապէս՝ չպէտք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ մարդկային բանականութիւնն էլ Աստուածային բանականութեան մի մասն է և գիտութեան մէջ էլ յայտնուում են մարդկանց Աստուածային ճշմարտութիւնները: Հակակրօնական, կարճամիտ և Աստուծուն հակառակ կ'լինի այդ պատճառով արհամարհել գիտութիւնը, որով-

հետև դրանով մենք արհամարհած կ'լինենք Աստուածա-
յին կայծը մարդու մէջ:

Եկեղեցու բռնած սխալ դիրքը դէպի գիտութիւնը
պատճառ է դարձել այն տարածուած կարծիքի, թէ եկե-
ղեցին կամ քրիստոնէական կրօնը անպատճառ հա-
կառակ պիտի լինի արդի գիտութեանը, որովհետև նրա
շնորհիւ կործանուած է տեսնում իւր պատմական շէնքի
շատ հատուածներ: Բայց եկեղեցու այդպիսի դիրքը դէպի
նորագոյն գիտութիւնը չի կարող երկար շարունակուել
և մեր պահանջն է, որ եկեղեցին վերջապէս բաջութիւն
ունենայ տեսնելու, որ ամեն բան իւր մէջ յաւիտենական
չէ, որ շատ երևոյթներ ու կարգեր, համոզումներ ու հա-
ւատալիքներ որոշ ժամանակի ստեղծագործութիւն լի-
նելով՝ իրենց ժամանակի հետ անցել պնացիլ են և նոր
ժամանակը նոր համոզումներ ու նոր կարգեր է պահան-
ջում: Եւ երբ որ եկեղեցին այդ հաստատուն հոգի վրայ
կանգնի, նա կ'տեսնի, որ ամեն փոփոխութիւն վերաբե-
րումէ կեդիին, իսկ կորիզը՝ քրիստոնէական եկեղեցու
հիմնաքար՝ Յիսուսի քարոզը մարդկանց ընդհանուր եղ-
բայրութեան և Աստուծոյ հաւասար որդիներ լինելու
մասին՝ դեռ ևս անփոփոխ իդէալ է մարդկութեան հա-
մար, որին գիտութիւնը ո'չ միայն ձեռնամուխ լինել չէ
կարողացել, այլ աւելի ևս առաջ է մղել: Թէ ի՞նչ պէտք
է լինի իսկական ճշմարիտ և անկեղծ հաւատացեալ քրիս-
տոնեայի դիրքը դէպի ամենայն գիտութիւն, կլասիկական
կերպով արտայայտել է քրիստոնէական եկեղեցու ամե-
նամեծ փիլիսոփաներից և ամենաշերմեռանդ հաւատա-
ցողներից մէկը՝ Ս. Օգոստինոսը: Նա ասումէ «Ինչ որ
փիլիսոփաները ճշմարիտ բան են ուսուցիլ, քրիստոնեան
դրանից երկիւղ կրելու կարիք չունի, այլ պէտք է ան-
միջապէս ընդունէ նրանցից, նրանց համարելով այդ
ճշմարտութիւնների ապօրինի տէրեր: Լաւ քրիստոնեան
գիտէ, որ իւր ճանաչած ճշմարտութիւնը, որտեղից էլ
գալու լինի այն, Տիրոջն է պատկանում»:

Եւ առհասարակ էլ սխալ է և բոլորովին անհիման գիտութիւնն ու կրօնը միմեանց հանդէպ հանել իւրեւ հակառակ ոյժեր: Նրանց սահմանները բոլորովին տարբեր են և մէկը միւսին վերացնել ամենաինչի կարող: Որովհետեւ կրօնը մարդու սրտում խորապէս արմատացած այն գիտակցութիւնն է, թէ մի յարաբերութիւն կայ իրեն և այն աննկարագրելի բարձրագոյն զօրութեան մէջ, որի տեսանելի արտայայտութիւնն է տիեզերքը: Այդ պատճառով էլ գիտութիւնն անկարող է վերացնել կրօնը, ինչքան էլ աշխատի կռուել նրա աւանդական ուսմունքների դէմ. որովհետեւ գիտութիւնը կարող է ամեն ինչ բացատրել, բայց կեանքի գործունեայ ոյժը ստեղծել անկարող է, նա չի կարող մինչև անգամ բացատրել, թէ ի՞նչ բան է կեանքը: Իսկ մարդու սրտից ու գլխից հանել կեանքի ուր և է նպատակի, տիեզերքի և իւր յարաբերութեան և իւր պարտականութիւնների գիտակցութիւնը, միտնգամայն անկարելի է: Գիտութիւնն ըստ ինքեան ի՞նչ կրօնական է և ի՞նչ էլ հակակրօնական. դրան ապացոյց է այն, որ շատ մեծ գիտնականներ խորին կրօնական զգացումն են ունեցել, և շատ դատարկազլուխ մարդիկ էլ եղել են անկրօն: Բացի այդ՝ գիտութիւնը չի կարող կրօնի անհաշտ թշնամի լինել նաև այն պատճառով, որովհետեւ երկուսն էլ առաջ են գալիս մարդու ներքին աշխարհից, իսկ այդ ներքին աշխարհը մի անբաժան միութիւն է: Միմեանց հակառակ երևում են նրանք այն պատճառով, որ մենք ճշգրիտ կիրպով չենք կարողանում ըմբռնել մէկի կամ միւսի էութիւնը, բաժանել նրանց սահմանները:

Ինչ՞նչ կ'առարկեն անշուշտ, որ եթէ այդպէս ամեն մէկը ժամանակակից գիտութեան համաձայն ազատ լինի կազմելու իւր տշխարհայեացքն ու դաւանանքը, այն ժամանակ բոլորի համար պարտադիր ընդունելի եկեղեցական դաւանանքի մասին խօսք չի կարող լինել, որովհետեւ այդպիսին բնականաբար կ'վերանայ: Որովհե-

տե՛ս ո՛չ մի տեղ բացարձակ անկեղծութիւնը աւելի սըրբազան պարտականութիւն չէ, քան թէ կրօնական և բարոյական կեանքի ասպարէզներում, պէտք է բոլորովին անկեղծ կերպով ասեմ, որ յիրաւի իմ գիտակցութիւնն էլ այդ է ասում. բայց ես ո՛չ մի ֆլաս և վտանգ չեմ տեսնում դորա մէջ քրիստոնէական հկեղեցու համար: Ու՛ր որ վտանգ է տեսնում, նա ուղիղ ըմբռնումն չունի կըրօնի մասին, այլ կարծում է, թէ կրօնի անխուսափելի պահանջն է որոշ մետաֆիզիկական ուսմունքների և դոգմաների ճշմարտութիւնն ընդունել, որ անպայման պարտադիր է բոլորի համար: Բայց կրօնն, ինչպէս ասացինք, մարդկային հոգու այն տրամադրութիւնն է, որով նա յարաբերութեան մէջ է մտնում տիեզերական զօրութեան հետ և այդ պատճառով էլ նոր կեանք՝ ու բարեպաշտութիւն է առաջ բերում, զօրացնում ու ոյժ տալիս ներքին աշխարհին՝ սրտին ու խղճին: Այդ պատճառով էլ ֆլասակար է ուղղակի հաստատուն ձեւակերպուած դոգմաներով ճնշել ազատ մարդու հոգին, յատկապէս այնպիսի դոգմաներով, որոնք ուրիշ ժամանակաշրջանի բարեպաշտութեան արտայայտութիւն են և ոչինչ չեն ասում իր հոգուն ու մտքին: Այդպիսի դիրն է, որ սպանում է հոգուն, որովհետեւ իբրեւ պարտադիր հեղինակութիւն խեղդում է նրան, այն ինչ կրօնական ու բարոյական կեանքի հեղինակութիւնը միայն բանականութիւնն ու խիղճն է և ազատ միտքն ու համոզմունքը իրենցից դուրս աւտորիտետ ճանաչել ու ընդունել չեն կարող:

Եւ յատկապէս հաւատոյ խնդրում առանձին զգուշութիւն է հարկաւոր: Մեր բոլորիս պարտականութիւնն է ի հարկէ պատկառանքով վերաբերուել դէպի մեր հայրերի հաւատն ու աւանդը, բայց հրը մեզանից պահանջում են նաև համաձայնութիւն յայտնել նրանց, ընդունել նրանց ճշմարտութիւնը, այդ արդէն մի ծանր բարոյական վտանգ է, որովհետեւ մեր համոզմունքի ու

խղճի թելադրութեամբ մինք այդ ընդունել չենք կարող, իսկ հակառակ համոզման ու խղճի պահանջ անհիշ այն հետևանքն ունի, որ եկեղեցու դէմ է հինում այժմ իրաւամբ այն զօրութիւնը, որ պէտք է իւրաքանչիւր եկեղեցու հիմքը լինէր, խղճի զօրութիւնը: Առհասարակ բոլորովին հակառակ է կրօնի էութեանը անհատի ազատութիւնը բռնաբարելը: Այդ պատճառով էլ ոչինչ նրան այնքան հակառակ չէ, որքան բռնի խոստովանութիւնը մի բանի, որի ճշմարտութեանը համոզուած չես: Եւ պէտք է իմանալ, որ այդպիսի բանը ոչ թէ պաշտպանութիւն է կրօնի, այլ ամենախիստ յարձակումն նրա վրայ: Որովհետեւ ոչ մի բան այնքան արգելք չէ կրօնական զգացմունքի զարգացման համար, որքան կեղծութիւնը: Չէ՞ որ կաթոլիկ եկեղեցին իւր միջնադարեան բռնութեամբ հէնց նրա համար է այնքան ատելի եղել, որ պահանջել է բոլորից՝ մի կողմ դնել իրենց անհատական ներքին անկախութիւնը և անպայման կերպով ընդունել իւր ուսմունքների ճշմարտութիւնը: Այն ինչ պարզ է, որ անհատի փրկութեան ու ներքին ազատութեան համար ուրիշների ասածներն ու արածները նշանակութիւն չունեն:

Մենք չենք կարող չ'խոստովանել, որ մենք այժմ աւելի անցած ժամանակների կրօն ունինք, քան թէ մեր սեպական և հաղարաւոր տարիների փոշին ծածկել է յաւիտենական ճշմարտութիւնները: Իսկ դրանից առաջ է եկել այն սոսկալի կեղծ դրութիւնը, որի մէջ մենք գտնուած ենք այժմ և որը աւելի է ֆլաստում կրօնին, քան թէ բոլոր արտաքին յարձակումները: Հէնց այդ դրութեան պատճառով է, որ եկեղեցու և կրօնի ծայրայեղ թշնամիները ոչ բոլորովին անիրաւացի կերպով ասում են, թէ «Հաւատ նշանակում է՝ մի բան ճշմարիտ յայտարարել, որ ճշմարիտ չես համարում»: Երբ և իցէ այդ տեսակէտից լուրջ կերպով մտածել ենք այն՝ մարդու վրայ սարսուռ ազդող դրութեան մա-

սին, որի մէջ է կրօնի դասաւանդութիւնը մեր դպրոցներում: Ի՞նչ ենք սովորեցնում աշակերտին մի ժամ առաջ՝ բնագիտութեան դասին և լինչպիսի հակասական բան մի ժամ յետոյ՝ չարաբաստիկ կրօնի դասին: Կարո՞ղ է աւելի մեծ վտանգ լինել մանկան հոգու և կրօնի համար, քան այդ դրութիւնը:

Այդպիսի սոսկալի ներքին հակասութեան ու կեղծիքի պատճառով է, որ մենք պահանջում ենք բոլորի համար ընդհանուր պարտադիր դաւանանքը վերացնել մէջ տեղից և այլ հաստատուն համոզումն ունինք, որ կրօնը զրանից ֆլաս չի կրէ. որովհետեւ՝ ինչպէս առհասարակ մտաւոր կեանքը, այնպէս էլ կրօնը նրանով է զօրութիւն ստանում, որ օտար տարրերը դէն է ձգում և իւր բուն էութեան վրայ է կենդրոնանում: Բացի այդ՝ կրօնի մէջ գլխաւորը մտքերն ու ուսմունքերը չեն, որոնք ի հարկէ յետոյ մէջ տեղ են գալիս, այլ մարդկային հոգու որոշ ուղղութիւնն ու տրամադրութիւնը, որ քրիստոնէութեան մէջ իւր կատարելագոյն արտայայտութիւնն է գտնում իբրեւ սէր առ Աստուած և նրա արդարութիւնը, անձնուրաց ծառայութիւն յօգուտ ճշմարտութեան և սէր դէպի մերձաւորը, հնազանդութիւն Աստուծոյ կամքին և այլն: Դաւանանք, ուսմունք, սովորոյթ, կաղմակերպութիւն տարբեր են եղել. մէկ է բոլոր ժամանակների համար Աստծուն և ընկերին սիրելու կրօնական պատուէրը. և ով որ այդ ընդունում է ու կատարում, ամենասերտ կապերով կապուած է թէ՛ Քրիստոսի և թէ՛ լաւագոյն քրիստոնեաների հետ: Այսքանը բաւական համարելով քրիստոնէական աշխարհայեացքի և դաւանանքի մասին, անցնենք այժմ պաշտամունքին:

Ե.

ԾԻՍ ԵՒ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ.

Մեր եկեղեցու այժմեան ամբողջ պաշտամունքն ու ծիսակատարութիւններն ևս պատմական զարգացման արդիւնք լինելով, կրում են իրենց վրայ իրենց սկզբնաւորութեան ժամանակի դրոշմը: Զանազան կրօնների խառնուրդի ժամանակ, արեւելեան խորհրդաւոր միատերիաների ազդեցութեամբ ու նմանողութեամբ առաջ եկած և անցեալում կազմուած, ամբողջ եկեղեցական պաշտամունքն ու ծէսը այսօր այլ ևս այն տպաւորութիւնը չեն թողնում արդի մարդու և քրիստոնեայի վրայ, ինչ որ սպասուում է և ինչ որ նրանց նպատակն է: Ո՛չ միայն այլևս չեն հասկացւում խորհրդաւոր ծիսակատարութիւնների ժամանակ կատարուած, երբեմն մեծ կարեւորութիւն ունեցող և նշանակալից գործողութիւնները, այլ ընդհանրապէս մեր օրերում կարելի է ասել կորել է հետաքրքրութիւնը հանդիսաւոր պաշտամունքի համար առհասարակ: Շատ հեռու է՝ գնանք. ինչպիսի մեծ փոփոխութիւն է առաջ եկել մեր ժողովրդի վերաբերմունքի մէջ դէպի եկեղեցին ու իւր պաշտամունքը միայն վերջին երկու տասնամեակում: Մի ժամանակ՝ հանդիսաւոր պաշտամունքի օրերին լի էին լինում եկեղեցիները և եկեղեցական տօները մեծ դեր էին կատարում մեր կեանքում: Իսկ այժմ՝ նոյն իսկ մեր ամենանուիրական ազգային, էլ չենք ասում զուտ քրիստոնէական—կրօնական տօները, կորցրել են իրենց նշանակութիւնը և եկեղեցիները մեծ մասամբ դատարկ են լինում այդպիսի տօներին:

Դրա պատճառները բազմաթիւ են. կենդանի խօսքի բացակայութիւնը, կատարուածի անհասկանալի լինելը, անտանելի ձանձրոյթը ժամեր շարունակ, անճոռնի յոգնեցուցիչ երգեցողութիւնը ևայլն ևայլն: Ինքն

ըստ ինքեան հասկանալի է, թէ ի՞նչ ուղղութեամբ պիտի լինի այստեղ բարեփոխութիւնը: Այն, ինչ որ անդառնալի կերպով հնացած է և անհասկանալի, պէտք է վերանայ պաշտամունքի միջից: Արդի մարդը ճշգրտում է ամեն բանի մէջ դէպի պարզութիւն. նոյն պահանջն է անում նա նաև պաշտամունքից. և այսօր ոչ մի կասկած չի նկատուի, որ մեր եկեղեցական պաշտամունքը հիմնական վերանորոգութեան և բարեփոխութեան կարօտ է: Նա պիտի իւր բոլոր մասերում կրճատուի, մաքրուի աւելորդ, օտար եկեղեցիների ազդեցութեամբ խճողւած տարրերից, համապատասխան գեղեցիկ երգեցողութեամբ ու երաժշտութեամբ ճոխանայ, որպէսզի նորից դէպի ինքը զբաւէ հաւատացեալներին, կրօնական սրբազան յոյզեր ու զգացումներ առաջացնելով նրանց մէջ:

Ի՞նչու համար ենք կարդում եկեղեցում բազմաթիւ ընթերցուածները, քանի որ կարելի է ասել՝ ոչ ոք նոցանից բան չէ հասկանում. իսկ հասկացողներն էլ չեն լսում. ինչո՞ւ համար շատ անգամ երկար, տաղտկալի ժամերգութիւնից յետոյ դեռ ևս Բարսեղ Կեսարացու կամ մի այլ նշանաւոր եկեղեցականի ճառն ենք կարդում, քանի որ համոզուած ենք, որ ոչ ոքի և ոչ մի օգուտ չենք տալիս զրանով, այլ ընդհակառակը շատերին ուղղակի փախցնում ենք եկեղեցուց, մեռցնելով նրանց մէջ ամեն բարեպաշտական պզտցմունք: Բարսեղ Կեսարացին և ուրիշները ժողովրդին հասկանալի լեզուով մի ժամանակ բացատրել են կատարուած տօնի նշանակութիւնը. նրանց ասածը ունկնդիրների համար կենդանի խօսք է եղել: Միայն յետոյ, երբ հոգևորականներն անշնորհք են դարձել անձամբ մի քանի խօսք ասելու և բացատրելու տօնը, վերցրել են հին հայրերի ճառերից համապատասխան հատուածներ առել ժամերգութեան մէջ, առանց այլևս հասկանալի և անհասկանալի լինելու վրայ ուշադրութիւն դարձնելու:

Մեր ներկայ ցաւերից մէկն էլ պաշտամունքի նկատմամբ ուրիմն այն է, որ պէտք է քարոզել, կենդանի խօսքը յաճախանայ եկեղեցու բեմից, կենդրոնական նշանակութիւն ստանալով ամբողջ պաշտամունքի մէջ: Անհասկանալի և աննպատակ ընթերցումները պիտի վերանան և ամեն ինչ կատարուի ժողովրդին հասկանալի լեզուով: Մենք չ'պէտք է մոռանանք, որ եկեղեցին ու իւր պաշտամունքը, ծէսը ժողովրդի համար է, ուրեմն պիտի աշխատի բաւարարութիւն տալ նրա հոգևոր և բարեպաշտական պահանջներին:

Մեր միտքն ու հասկացողութիւնը պաշտամունքի մասին ընդհանրապէս և Հայոց եկեղեցու պաշտամունքի բարեփոխութեան մասին մասնաւորապէս աւելի պարզ կացուցանելու համար, կարևոր ենք համարում թէ սկզբունքի և թէ իրական դրութեան մանրամասնութիւնների մէջ մտնել:

Որովհետև մեր մինչև այժմ ասածներից երեաց, որ քրիստոնէական եկեղեցի ասելով մենք մի կրօնական համայնք ենք հասկանում՝ զուտ կրօնական ու բարոյական սկզբունքներով, որի անդամը լինելու միակ պայմանն այն է, որ մարդ ընդունէ աւետարանական սկզբունքների վեհութիւնը, ինչպէս Յիսուսն է քարոզել և աշխատէ բոլոր հոգւով ու սրտով կեանքի մէջ իրականացնել, դառնալով մի տեսակ կեանքը նորոգող, մաքրող ու զօրացնող թթխմոր,—այդ պատճառով կարող են մեզ առարկել, թէ էլ ի՞նչ պէտք են եկեղեցիները: Եւ յիշուի, շատերը նոր մարդկանցից հեռացել են եկեղեցուց: Բայց այդպիսի վճիռ անելը յառաջ է գալիս խնդրի խորքը չ'թափանցելուց: Որովհետև սոցիալական փորձը ամբողջ պատմութեան ընթացքում մեզ ուսուցանում է, թէ քանի կրօնական կարիքներ կունենան մարդիկ և բնականաբար կաշխատեն նաև բաւականութիւն տալ այդ կարիքներին, նոքա միշտ մի

կազմակերպուած համայնք առաջ կ'ընդհան: Պատմութեան մէջ անկարելի է ցոյց տալ որեւէ կրօն, որ պաշտամունք առաջ բերած չ'լինի և ոչ մի կրօնական շարժումն էլ չի կարող առանց կազմակերպութեան մնալ: Ծշմարիտ է, որ կրօնի էութիւնն ու հոգին իւր սկզբունքներն են. բայց ուղիղ է նաև այն, որ լոկ սկզբունքները առանց կրօնական կազմակերպութիւնների և ձևակերպութեան՝ իսկապէս հոգի են առանց մարմնի: Իսկ այդպիսի բանը մեր մարդկային յարաբերութեան մէջ գոյութիւն պահպանել և զօրութիւն դառնալ անկարող է:

Սրանից հետևում է ուրեմն, որ պաշտամունքը իւրաքանչիւր կրօնի համար պատմական անհրաժեշտութիւն է, թէև իհարկէ ամբողջ կրօնական կեանքը նրա մէջ չէ բովանդակում ամենեին: Ընդհանուր հասարակական պաշտամունքը կարիք է նաև այն տեսակէտից, որ շատերի համար մեծ նշանակութիւն ունի իւր աչքով տեսած օրինակը. այդպիսիներին ուրեմն պէտք է սովորեցնել ու մխիթարել: Ընդունելով ուրեմն եկեղեցական պաշտամունքի կարևորութիւնն ու մինչև անգամ անհրաժեշտութիւնը, մենք առաւել ևս ստիպուած ենք բողոքելու մեր եկեղեցում տիրող այժմեան պաշտամունքի դէմ, որովհետև այն ամենեին չի համապատասխանում իւր նպատակին: «Հոգւով և ճշմարտութեամբ» երկրպագութեան փոխարէն, այսօր մենք ունենք նշանների, բանաձևերի և անմիտ ձևականութիւնների աստուածապաշտութիւն. և մենք չենք կարող մոռնալ, որ մի այդպիսի կրօն խորտակել կամենալու համար Յիսուս խաչուեց: Պաշտամունքը այն միջոցն է, որով բարեպաշտ հոգին յարաբերութեան մէջ է մտնում իւր Աստուծոյ հետ. ուրեմն նա պէտք է այնպէս լինի և այն ձևով կարգաւորուի, որ գոնէ բարեպաշտական զգացումները չ'մեղցնէ: «Ծէսին միջով պէտք է դիմել դէպի Քրիստոս» ասել, կ'նշանակէ Քրիստոսին չ'ըմբռնել ամենեին: Պաշտամունքի, ծէսի արժէքը պիտի չափուի

նրանով, թէ որչափ մխիթարում է ու կրթում, կրօնական կեանքն ազնուացնում ու խորացնում: Հէնց այդ պատճառով էլ նոյն իսկ պաշտամունքի մէջ չի կարելի աւանդական ձևերը փաթաթել մարդկանց վրդին, քանի որ նրանց հետաքրքրութիւնը վաղուց կորած է: Դրա համար էլ անհրաժեշտ պահանջ է պաշտամունքը արդի մարդու հոգեկան կարիքներին համապատասխան դարձնել: Մի ժամանակ շատ մեծ նշանակութիւն է ունեցել թէ առհասարակ կրօնի և թէ պաշտամունքի մէջ անըմբռնելի խորհրդաւորութիւնը: Այժմ այդ դրութիւնն այլ ևս ոչ մի ազդեցութիւն գործել չէ կարող և պէտք է բնականաբար վերանայ: Անհասկանալի քարացած կարգերի և քանանական չոր ու ցամաք ձևերի տեղը պէտք է բռնէ պաշտամունքի մէջ ժամանակակից քրիստոնէական կրթութիւնն ու գեղարուեստը, բարոյական գրականութիւնը, կոնցերտը և այլն:

Քրիստոնէական եկեղեցու ընդհանուր զարգացման ծանօթ մարդը գիտէ, թէ որչափ պարզ և միանոյն ժամանակ որչափ վեհ է հղել նախնի քրիստոնեայ համայնքների սովորական պաշտամունքը: Այնտեղ չ'կան այն բաղմաթիւ ձանձրալի կրկնութիւններն ու տաղտկալի ընթերցումները, անթիւ, շատ անգամ անմիտ շարականների հետ, որոնցով այսօր լցուած է մեր եկեղեցական պաշտամունքը: Քրիստոնեայ համայնքի անդամներն հաւաքւում են մի տեղ Սուրբ Գրքից մի հատուած կ'որդալու և այդ հատուածի մասին խօսելու, իրենց ըմբռնումն արտայայտելու համար: Եւ այստեղ խօսելը որոշ ընտրեալների սեպհականութիւն չէ, այլ ազատ իւրաքանչիւրի համար, ով որ իւր մէջ Սուրբ Հոգու շնորհն է զգում՝ եղբայրներին մխիթարելու և նրանց տարակուսանքները փարատելու: Յայտնի է, թէ ինչպէս յետոյ, Բ. և Գ. դարերի ընթացքում այս միայն կ'իւրաքանչիւ է, Տիրոջ անուանը նուիրուած

օրերը կատարուող աստուածապաշտութիւնը ընդարձակ-
ւումէ ամեն կողմից, ինչպէս ազատ խօսքն հետզհետէ
լնումէ և դրա համաձայն էլ պաշտամունքը հաստատուն
ձեակերպութիւն է ստանում: Դեռ ևս մինչև Գ. դարու
վերջերը անհրաժեշտ էր համարւում ամենին լի օրերի
ժամերգութիւնը, որ սակայն յաճախ լինումէր: Միայն
Ե. և Զ. դարերից սկսած ամենօրեայ առաւօտեան և
երեկոյեան ժամերգութիւնը համարւումէ պարտադիր:*)

Յետագայում, քանի պակասում է և նուազում
քրիստոնէական ոգին, այնքան աւելանում են ձեր, տ-
ղօթքի ժամերի թիւը և անթիւ կրկնութիւնները: Քրիս-
տոնեաները մոռանում են իրենց վարդապետի գլխաւոր
պատուէրներից մէկը. «Աղօթք անելու ժամանակ հեթա-
նոսների նման շատախօս մի լինիք, որոնք կարծում են,
թէ շատ խօսելու պատճառով կ'յտուին. նախ քան ձեր
խնդրելը ձեր Հայրը գիտէ, թէ ձեզ ինչ է պէտք»: Եւ
այդ տարօրինակ մոռացութիւնը շատ եկեղեցիների
նման մեղմում էլ դեռ մինչև այսօր պահում է իւր գոյու-
թիւնը և արդէն այնքան հաստատուն արմատ է բռնել,
որ այդպիսի սխալի դէմ խօսելն անգամ հակաքրիստո-
նէական բան է համարւում: Այդպիսով՝ այն, ինչ որ ոչ
մի նշանակութիւն պիտի չունենայ քրիստոնէութեան հա-
մար, արտաքին ձևն ու երևոյթը, այսօր դարձել է
ամենամեծ նշանակութիւն ունեցողը, առանց որի կար-
ծւումէ միաժամբար, թէ քրիստոնէական եկեղեցին դո-
յութիւն ունենալ չէ կարող: Յիրաւի, ի՞նչ է մեր եկե-
ղեցու այժմեան ժամերգութիւնը:

Հայոց եկեղեցու սովորական ժամերգութիւնը բա-
ժանւում է հետևեալ մասերի. 1) Դիշերային, 2) Առա-
ւօտոք, 3) Արևագալի, որ այժմ միայն Մեծի Պահոյ
օրերն է կատարւում, բայց մի ժամանակ կատարուել

*) Հմտ. այդ դարգացման մասին՝ Նրուսնդ վրդ. Տէր Մինա-
սեանց, ընդհանուր եկեղեցական Պատմութիւն, Հատոր Ա. Հին
եկեղեցին, էջմիսժին 1908. էջ 30, 52 շար., 68 շար., 191—199,
360—361.

է ամեն օր. 4) Ճաշու, երեք մասի բաժանուած՝ Երրորդ, Վեցերորդ և Իննիւորդ ժամերին, այժմ միացած է կատարուում, առաջ անշուշտ երեք համապատասխան ժամերին մինչև ճաշը. 5) Երեկոյի, 6) Խաղաղական և 7) Հանգստեան: Նախկին ժամանակներում ուրեմն մեր հայրերը կարեւոր են համարել ամբողջ օրը անդադրում աղօթք անել Սատժուն, օրական 9—7 անգամ: Դժուար թէ մեր եկեղեցում սակայն այդ անհնարին սովորութիւնը երկար ժամանակ տևած լինի: Շուտով կարիք է զգացուել մի քանիսը ժամերգութեան կարգերից միացնելու և միասին կատարելու միևնոյն ժամին: Դրանից ստացուել է հետեւեալ պատկերը, որ մինչև այսօր էլ իշխող է մնում մեր եկեղեցու մէջ: Առաջին չորս կարգերը միացրել են և դարձրել մի ժամերգութիւն, վերջին երեքը նոյնպէս: Որնոքա մի ժամանակ առանձին ժամեր են կատարուել, երևում է նրանից, որ Մեծի Պահոց օրերին հին կարգի մնացորդները մէջ տեղ են գալիս: Ուրեմն ժամանակի պահանջները ստիպել են մեր հայրերին իրենց եռանդը չափաւորելու և մարդկանց աշխատելու ժամանակ էլ թողնելու. որովհետև շարունակ աղօթելը ոչ միայն հաճելի չէ Սատժուն, այլ և ուղղակի վնասակար է մարդու համար: Իսկական կրօնական անձնաւորութիւնը ժամանակ պէտք է ունենայ լուրջ գործունէութեամբ զբաղուելու, դիմելով դէպի իւր որոշած նպատակը: Այդ է կրօնի ճանապարհը: Ուրեմն բարեպաշտութեան սկիզբը աշխատասիրութիւնն է. և ով որ պատճառ է դառնում մէկին իւր հոգու խորքով սիրած աշխատանքը թողնելու, նա ինքը անաստուած լինելով, ուրիշին էլ մղում է դէպի հակակրօնականութիւն:

Ասածներից երևում է, որ ժամապաշտութիւնն անգամ, եկեղեցական կեանքի ամենից աւելի անշարժ դարձած ու մնացած երեւոյթը, դարերի ընթացքում թէ գիտակցական և թէ անգիտակցական փոփոխութիւն-

ների է հնթարկուել: Իսկ դրանից անմիջապէս հետեւում է, որ նոյնպիսի փոփոխութիւնների հնթարկուել կարող է այն նաև այսօր և յետագայում, եթէ կարիք զգացուի: Իսկ որ այդ կարիքն այսօր իւր բոլոր ծանրութեամբ ու լրջութեամբ զգացւում է մեր ժողովրդի բոլոր խաւերի, առաւելապէս հէնց իրենց հօգևորականների մէջ, այդ վեր է ամեն կասկածից: Ո՞ր եկեղեցու քահանան առաւօտեան և երեկոյեան ժամերգութիւնից յետոյ յետ չէ դարձել «Օրհնեալք հղերուք» ասելու, և եկեղեցին դատարկ չի դառնում: Եւ այն ո՛չ թէ մի, երկու, երեք անգամ, այլ տարին տասներկու ամիս շարունակ: Ի՞նչ է նշանակում այդ երևոյթը. այդ նշանակում է, որ ամեն օր առաւօտ ու երեկոյ աղօթելու պահանջը ամենեկին չկայ այլ ևս մեր ժողովրդի մէջ և եթէ կայ էլ, բաւականա՛նում են առաւօտեան լուացուելուց յետոյ և երեկոյեան քնելուց առաջ խաչակնքելով իրենց կամ մի «Հայր մեր» ասելով, եթէ գիտեն: Պէտք է և իրաւունք ունեւորանալու թողնել այդ երևոյթը: Մենք կարող էինք նշանակութիւն չտալ և անուշադիր թողնել այն, եթէ ժամապաշտութիւնը ժողովրդի համար չ'լինէր: Բայց ո՛չ ոք կասկած չայտնել չէ կարող, որ պաշտամունքը ժողովրդի համար է. իսկ եթէ նա կարիք չի զգում այդ պաշտամունքին, բոլորովին աւելորդ է ուրեմն նրա անունից և նրա համար կատարուող ժամեր տևող կարգը:

Ասողներ կ'լինեն անշուշտ, որ հօգևորականութիւնը պարտաւոր է, ժողովուրդը եկեղեցում լինի, թէ չ'լինի, նրա կողմից աղօթել Աստծուն, ուրեմն և ամբողջ պաշտամունքը կատարել: Այդպիսի հասկացողութիւնը քրիստոնէական չէ, ո՛չ միայն նրա համար, որ քրիստոնէական կրօնը լիովին մերժում է այդպիսի միջնորդութեան գաղափարը, այլ նաև այն պատճառով, որ պաշտամունքի միջոցով իւր արտայայտութիւնն ու բաւարարութիւնը գտնող կրօնական կարիքը անհա-

տական, անձնական կարիք է և նշանակութիւն ունի անհատի համար միայն այն ժամանակ, երբ նա զգում է այդ և անձամբ էլ բաւարարութիւն է տալիս: Բացի այդ՝ հոգեւորականը մեքենայ չէ, որ կանգնի եկեղեցում ժամերով զանազան անտարբեր կարգեր կատարէ, առանց կապիւլու կատարածը իւր համոզումների և ներքին կեանքի հետ: Այդպիսի պահանջ անել հոգեւորականից կ'նշանակէ մերժել նրա անհատական ներքին կեանքի ու համոզումների իրաւունքը և նրան հասարակ աւտոմատի աստիճանին իջեցնել: Էզրակացութիւնը բնականաբար այն է, որ եթէ ժողովուրդը այդ կրօնական կարիքը չունի և պէտք էլ չի համարում նրան բաւարարութիւն տալ, բոլորովին աւելորդ է ուրիշների աշխատանքը:

Մենք չ'պէտք է մոռանանք այն հանգամանքը, որ քրիստոնեայ մարդը եկեղեցի մտնելով ամենայն օր ստիպուած է լսել միևնոյն խօսքերը, որոնք եթէ մի ժամանակ նրա մտքին ու սրտին որևէ բան ասել էլ են, այժմ շարունակ թուժակաբար, առանց մտածելու կրկնուելուց կորցրել են իրենց նշանակութիւնն ու բովանդակութիւնը: Բացարձակ կուրուքիւն կ'լինի մեր կողմից ուրանալ կտմ չ'գիտակցել, թէ ի՞նչ սոսկալի դրութեան մէջ ենք դնում մենք մեզ և ուրիշներին, երբ ամենայն երեկոյ դնում ենք եկեղեցի, «Սոնարհեցո՛ւ, ապրեցո՛ւ» ասում և ուրիշներին էլ ստիպում, որ ամեն օր դան մեզ լսեն: Առաջ եկած դրութեան լրջութիւնը պիտի ստիպէ մեզ մտածելու և մի այնպիսի ելք գտնելու, որ առանց քրիստոնէական եկեղեցու ամբողջութեանը վնաս հասցնելու, հնարաւոր լինի նրա անդամներին կրկին կապել ընդհանուր գործի հետ, դարձեալ քիմիութեամբ լցնել նրանց սիրտը դէպի եկեղեցին: Իսկ այդ հնարաւոր է միայն այն ժամանակ, երբ մենք առանց կեղծիքի և ստութեան, առանց քաշուելու և վառանելու կ'խոստովանենք ազնւութեամբ, որ այս ձևով

ու եղանակով շարունակել մենք հոգևորա-
կաններս այլ ևս չենք կարող, որովհետև մենք
զգում ենք, որ սոսկալի կեղծիք ենք կատարում. իսկ
կեղծիքն ու սուտը, ինչպէս ասել ենք արդէն, այն բա-
ներն են, որոնք երբէք կրօնի մէջ ոտք կոխել չեն կա-
րող, եթէ այդ կրօնը որ և է բարոյական բարերար ազ-
դեցութիւն է ուզում թողնել իւր շրջապատի վրայ: Այդ-
պիսի ազնիւ և անկեղծ խոստովանութիւնը մի մեծ քայլ
է դէպի բարեփոխութիւնը, որովհետև կեղծիքն ու ան-
պէտքը մի կողմ դնելուց յետոյ, մենք ստիպուած կ'լի-
նինք կանգնելու նոր ճանապարհի վրայ: Զէ՞ որ նոր
տուն շինողները կամ հէնց միայն կարկատան անողներն
էլ նրանից են սկսում իրենց գործը, որ հինը կամ շէն-
քի փչացած մասը քանդում են:

Մինչև այժմ իմ խօսքս սովորական պաշտամունքի
մասին էր. նոյնը կրկնակի ոյժով պնդել կարելի է
նաև տօն օրերի հանդիսաւոր պաշտամունքի մասին:
Բայց մենք այդ ինքնըստինքեան հասկանալի ենք հա-
մարում և անցնում ենք, վերջնական եզրակացութիւ-
նից առաջ, եկեղեցական պաշտամունքի ամենախոր-
հրդաւոր և ամենից աւելի սիրուած մասին, պատա-
րագին:

Պատարագը սկսած նախնական քրիստոնէութիւ-
նից եղել է եկեղեցական պաշտամունքի գագաթնակէ-
տը և մնում է մինչև այսօր: Բայց բոլորովին սխալ
կ'լինի կարծել, թէ պատարագը սկզբից և եթ նոյն
բնոյթն ու նշանակութիւնն է ունեցել, ինչ որ ունի
նա այժմ: Ընդհակառակը՝ եթէ մենք համեմատելու
լինենք նախնական քրիստոնէութեան սովորութիւնը
և մեր այժմեան, Համարիա Դ. դարից մինչև այժմ ան-
փոփոխ կերպով ձևակերպուած պատարագը, կ'տեսնենք,
որ ամեն ինչ փոխուած է: Նախնական քրիստոնէու-
թեան մէջ մի պարզ սովորութիւն էր այն. որ և իցէ
հաւատացեալի տուն էին հաւաքում քրիստոնեայ եղ-

ըայրները, օրհնեալ հաց էին կտրում միասին և բաժակից խմում՝ Տիրոջ յիշատակը պահելու համար, նրա կտակի համաձայն: Ուրեմն մի տեսակ կրկնուումէր ամենայն շաբաթ Տիրոջ խորհրդաւոր ընթրիքը. և նրա նպատակն էր կապ պահպանել քրիստոնէական համայնքի անդամների մէջ: «Ինչպէս որ այս կտրուած հացը ցրուած էր բլուրների վրայ և այժմ հաւաքած մի է դարձել, թող այնպէս էլ քո եկեղեցին երկրի ծայրերից հաւաքուի քո արքայութեան մէջ», ասած է նախնական քրիստոնէութեան աղօթքներից մէկի մէջ, որ արտասանուումէր անշուշտ այդ առթիւ:

Բայց այս պարզ և միանգամայն ըմբռնելի հասկացողութիւնը ժամանակի ընթացքում, յատկապէս արեւելեան խորհրդաւոր միատերիանների և ծիսակառուութիւնների ազդեցութեամբ, փոխուում է և արդէն Գ. դարում կազմուում է այն հայեացքը, այնուհետեւ իշխող է մնում քրիստոնէութեան մէջ մինչև մեր օրերը: Այժմ այլ ևս խորհրդաւոր ընթրիքի յիշատակը չէ, որ կատարուեմն, Տիրոջ կտակի համաձայն. մոռացութեան է տրուում նաև նրա նպատակը, որ, ինչպէս տեսանք, քրիստոնեայ համայնքի անդամների մէջ միութեան կապ լինելն էր: Ամբողջ մանրամասն մշակուած ծիսակատարութեան միտքը այժմ այն է, որ հացն ու գինին, նրանց վրայ կարդացուած աղօթքների զօրութեամբ՝ գերբնական զօրութիւն ստանան, «Անմահութեան կերակուր» դառնան և անանցութիւն շնորհեն մարդուն *): Այդպիսով կազմուում է այժմեան ըմբռնումը պատարագի մասին, որի համաձայն հացն ու գինին աղօթքների միջոցով անիմանալի եղանակով փոխարկուում են Քրիստոսի իսկական մարմնին և արեանը: Դրանով պատարագը մի զոհ է դառնում. ամե-

*) Հմտ. մեր ընդհանուր եկեղեցական Պատմութիւն, Հատոր Ա. էջ 30, 53—54 և 194:

նայն անգամ զոհուում է Քրիստոսը, որպէս զի նրա մարմինը ճաշակելով ու արիւնը ըմպելով ապաշխարած և մաքրուած հաւատացեալը մեղքերի թողութիւն ստանալով, մասնակից լինի Աստուծոյ արքայութեանը կամ կրկին քրիստոնէական «սուրբ համայնքի» անդամ համարուի: Այդ պատճառով էլ ապաշխարողները, չը մկրտուածները և այլն չեն կարող ներկայ լինել խորհրդաւոր հանգիսին և մասնակցել սուրբ հաղորդութեան խորհրդին:

Զիմ կարծում, թէ որևէ մէկը կամենայ լուրջ կերպով պնդել, թէ այդպիսի հասկացողութիւնը կարող է այսօր մեզ համար նշանակութիւն ունենալ կամ մինչև իսկ պարտադիր համարուել: Ամբողջ վերև նկարագրած հասկացողութեան հիմունքն այն գաղափարն է, թէ մեր մեղքերի պատճառով Քրիստոսը մեռել է խաչի վրայ և այդպիսով Աստուծոյ հաշտեցրել մարդկային ազգի հետ: Մեր այժմեան բարոյական հայեացքով ու խղճմտանքով այդպիսի գաղափար ընդունել մենք անկարող ենք և այն հակառակ է մինչև իսկ Յիսուսի քարոզած Աստուծոյ ըմբռնմանը, որի համաձայն Աստուած մեր հայրն է: Ի՞նչ է նշանակում, թէ Աստուած, մեր բոլորիս հայրը, մեղաւորներին յանցանքը միայն այն ժամանակ կարող է ներել, երբ դառնութեան վըշտի ու սոսկալի տանջանքի բաժակը մեղաւորներին փոխարէն բացարձակ անմեղն է քամում: Այդպիսի սարսափելի Աստուածը ի՞նչպէս կարող է մեզ սիրող հայր համարուել: Զուգահեռով այլ ևս հրկար խօսել այդ խնդրի մասին, այսքանը միայն առ այժմ կարևոր ենք համարում ասել, որ իհարկէ պատարագն էլ իւր հասկացողութեամբ ու ծիսակատարութեամբ պէտք է փոփոխութեան ենթարկուի և իւր նախկին կերպարանքն ստանայ, երբ այն միայն տիրոջ մահուան յիշատակն էր և քրիստոնէական համայնքի միութեան նշանը: «Զայս արարէք առ իմոյ յիշատակի»: «Քանիցս անգամ թէ

ուտիցէք զհացս զայս և զբաժակս ըմպիցէք, զմահն տեսան պատմեցէք» (Ա. Կորնթ. ԺԱ. 23—26):

Ընդհանուր եղբակացութիւնը պաշտամունքի մասին այն է ուրիմն, որ անիմաստ ծէսն ու մեքենայական ձևականութիւնը, որոնց կատարման ժամանակ ոչ հոգևորականն է որ և է բանի մասին մտածում կամ որ և իցէ բան զգում, ոչ էլ ժողովուրդը, պէտք է վերանան: Այդպիսի պաշտամունքը չի կարող մինչև անգամ Աստուածահաճոյ լինել, և զրա համար է ասում մարգարէն Աստուծոյ կողմից. «Ատեցի, մերժեցի զտօնըս ձեր և ի տարեկանս ձեր ոչ հոտոտեցայց: Զի թէ մատուցանիցէք զողջակէզս և զզոհս ձեր՝ ոչ ընկալայց, և ի խաղաղականս պարարտաց ձերոց ես ոչ հայեցայց: Ի բաց արա յինէն զձայն երգոց քոց, և զնուագս սրնդաց քոց ես ոչ լուայց: Եւ յորդհսցին իբրև զշուր իրաւունք, և արդարութիւն իբրև զհեղեղ անհուն»: (Ամովս Ե. 21—24): Ուր Աստուածային հոգին չ'կայ, այնտեղ ի դուր են բոլոր պաշտամունքներն ու ջանքերը աստուածամերձ երևալու համար: Ինչպիսի բնաւորութիւն պիտի ունենայ պաշտամունքը և ինչը կարող է լինել նրա նպատակը, բացի վերև բերուած Ամովսի խօսքերից, գեղեցիկ կերպով բնորոշում է Նաայի մարգարէն. «Լըսեցէք տիրոջ խօսքը, Սողոմի իշխաններ, ահանջ դիր մեր Աստուծոյ օրէնքներին, Գոմրիայի ժողովուրդ. ինչքն են պէտք ձեր բազմաթիւ զոհերն, ասում է Նահուէն. կշտացել եմ ձեր խոյրի ողջակէզներից և ցուերի ճաշպից. չեմ ուզում ոչխարների և եզների արիւնը: Ես ատում եմ ձեր նոր-լուսիններն ու տօները. նոքա ինձ համար բեռ են, որ ես կրիւղց յոգնել եմ: Եթէ դուք ձեր ձեռը մեկնէք, ես իմ դէմքը կ'ծածկեմ ձեր առաջ, ես չեմ լսի ձեզ, ինչքան էլ շատ աղօթէք, որովհետև ձեր ձեռները լի են արիւնով: Լուացէք, սրբեցէք ձեզ, հեռացրէք իմ աչքի առաջից ձեր չար գործերը, դադարեցէք չարիք գործելուց, սովորեցէք բարիք անել:

իրաւունք՝ փնտրեցէք, փրկեցէք զրկուածին, որքի դատաստանը տեսէք և այրու իրաւունքը մի բռնաբարէք: Այն ժամանակ՝ եթէ ձեր մեղքերը ձանձախարիթի նման լինին, ձիւնի նման սպիտակ կ'դարձնեմ, եթէ մութ կարմիր դոյն ունենան, ասրի նման կ'շինեմ» (Ես. Ա. 10—18):

Այդ նպատակի համաձայն էլ՝ քրիստոնեայ հոգեւորականի սրբազան պարտականութիւնը մատաղ օրհնել, պատարագ մատուցանել, մեռել թաղելն ու մկրտութիւն անելը չէ, որ կարող է կատարելամեն քրիստոնեայ մի «Հայր մեր» կամ «Յանուն Հօր» ասելով, այլ հաւատացեալներին Յիսուսի քարոզն ու վարդապետութիւնը ուսուցանելը և բարոյական, աստուածահաճոյ կեանք առաջ բերելը: Այդ նպատակին պիտի ծառայէ առհասարակ քրիստոնէական եկեղեցու ամբողջ պաշտամունքը, ինչպէս որ եկեղեցին ինքն ևս բարոյական սկզբունքների քարոզութեան մի միջոց պիտի լինի: Օգոստինոսի նման «Հեթանոսների առաքինութիւնները փայլուն մոլութիւններ են» ասելով, մենք ինքնեքա քրիստոնեայ չենք դառնում դեռ ևս: Ուսուցմամբ ու օրինակով պէտք է քրիստոնէական եկեղեցին աշխատի իւր սկզբունքները իրականացնել կեանքի մէջ: Աստուծոյ բնակարան և միակ կենդանի սրբաւայր խիղճը զարթեցնել մարդկանց մէջ, բարոյական եռանդը զօրացնել, մեղքի դէմ կռուել, մխիթարութիւն ու օգնութիւն մատուցանել, ահա այն նպատակը, որին պիտի դիմենք մեր բոլոր կարողութեամբ: Եւ այդ նպատակի իրագործման համար հասարակաց պաշտամունքն ևս շատ մեծ գործ կարող է կատարել, եթէ նա մեր ասած եղանակով բարեփոխուի: Քարոզի ու կենդանի խօսքի միջոցով նա պիտի ժողովրդի առաջ միշտ կենդանի պահէ Յիսուսի պատկերը, որ անձնութեան ու հասարակաց օգտին արած զոհաբերութեան ամենանսկայական օրինակն է: Մինչև ցո-

րենի հատիկը հողի մէջ չ'թաղուի, առատ պտուղ բերել չէ կարող: Աշխարհի անվերջ տանջանքի խայթոցը նրանով է ոչնչանում, որ մտնում է ազնուագոյնների սիրտը: Դրանով ենք սովորում մենք յաղթահարել տանջանքը և այդպիսի հերոսներն են առաջնորդում մարդկութեանը դէպի վեր, դէպի իսկական կեանքն ու ճշմարտութիւնը: Այդ է, որ մեզ համար խաչը յաղթութիւն է դարձնում, որովհետեւ խաչի վրայ մեռնող հերոսը միայն աշխարհին յաղթել կարող է, և ճշմարտութիւնը յաղթում է իւր վկայի արիւնով: Դրանով պաշտամունքը ծառայած կ'լինի իւր նպատակին և նրա դէմ ոչ ոք ոչինչ չի ունենայ ասելու:

Եթէ այդպիսի քարոզութիւնն ու կրօնական զգացումներ առաջ բերելն է պաշտամունքի նպատակը, որ անկասկած է, ապա մենք պէտք է զգուշանանք միևնոյն բանը յաճախելի կրկնելուց, ուրեմն ամենայն օր, այն էլ օրական երկու անգամ պաշտամունք կատարելուց: Սակայն այդ բանն անել մենք չենք էլ կարող, որովհետեւ ժամանակը և ներկայ դրութիւնը արդէն այնտեղ է հասցրել, որ եկեղեցիները դատարկ են այդպիսի ժամերգութիւնների ժամանակ: Եթէ կարծողներ կան, թէ օրական երկու անգամ պաշտամունք է կատարւում նրա համար, որ քրիստոնեաները անդադար աղօթեն, այդպիսիները թող չ'մոռանան, որ աղօթելու համար զանազանութիւնն ու ձևականութիւնները ոչ միայն կարեւոր չեն, այլ և միանգամայն աւելորդ են: Աղօթող սիրտը Աստծուն մօտիկ է, եթէ նա տարին մի անգամ էլ եկեղեցի չ'մտնի. իսկ աղօթելու անտրամադիր հոգին, եթէ լոկ սովորութեան համաձայն ամբողջ օրն էլ եկեղեցում անցկացնէ, միևնոյն է, հեռու է մնում իւր Աստծուց և ոչինչ չի շահում: Չ'պէտք է մոռանանք երբէք տիրջ այն պատուէրը, թէ աղօթքը ցուցամոլութեան համար չ'պէտք է լինի, այլ հոգու ներքին խորին պահանջ: Այդպիսի պահանջ ունեցողը կարող է իւր սենեակում

էլ աղօթել, կարող է առանց մի բառ արտասանելու էլ աղօթքի, սերտ հաղորդակցութեան մէջ լինել իւր Աստծու հետ և ամենևին կարիք չունի, որ մենք նրան եկեղեցի հրաւիրենք, Ընդհակառակը՝ ճշմարիտ աղօթքի տրամադրութիւնը կորչի կարող է այդպիսի հանգամանքներում: Աղօթքի կենդանի օրինակը մեզ համար Յիսուան է: Սուրբ բան է աղօթելը նրա համար. այնքան սուրբ, որ աշխարհը նրան վկայ լինել չի կարող և այնքան լուրջ, որ իւրաքանչիւր աւելի խօսքը ի չարէն է: Չէ՞ որ որդին է Հօրը խնդրում և Հայրը առանց խնդրելու էլ զիտէ, թէ ինչ է պէտք:

Ուրիմն աղօթելու համար էլ ամենևին կարևոր չէ ամենօրեայ եկեղեցական պաշտամունքը: Մենք պէտք է վերադառնանք նախնական քրիստոնէութեան այն սովորութեանը, որի համաձայն շաբաթական մի անգամ, Տիրոջ նուիրուած՝ կիւրակէ օրը պաշտամունք կատարեն ու միասին համախմբուելը բոլորովին բաւական էր համարուում: Մենք այժմ աւելի կարիք չունինք և չենք զգում, քան թէ այն ընդհանուր ոգևորութեան ժամանակն էր: Իսկ եթէ համայնքի մէջ աւելի մեծ կարիք ունեցողներ կ'լինեն, կարիք կ'լինի աւելի յաճախ յիշեցնել նրանց Յիսուսի վարդապետութիւնն ու կեանքը, այդպիսիների համար առանձին գումարումներ անելը միշտ կ'մնայ քրիստոնեայ հովուի և ժողովրդի առաջնորդի սրբազան պարտականութիւնը:

Դրանով եկեղեցին կ'լինի լուսաւորութիւն տարածող մի քաղաքակրթական գործօն, ինչպէս վայել է նրան և ինչպէս եղել է նա առաջ: Եւ միանգամայն կորոշուի նաև այն դիրքը, որ նա իւր ամբողջ հոգևորականութեան հետ միասին պարտաւոր է բռնել դէպի այն դարէդար անցնող հեթանոսական սովորութիւնները: Երոնք մուտք գործած լինելով հայ քրիստոնեայ համայնքի մէջ, ոչ միայն հանդուրժուում են հայ քրիստոնէական եկեղեցու և հոգևորականութեան կողմից,

այլ կարելի է ասել՝ մինչև անգամ քաջալերւում են: Մեր խօսքը ժողովրդի մէջ տարածուած մնապաշտութեան ու կռապաշտութեան մասին է, որ նրան շրջապատող մահմէդականներին բոլորովին հաւասար քաղաքակրթական աստիճանի վրայ է դնում, և որի հետեւանքն է զանազան հրաշագործ պատկերներ, կարմիր ու ճերմակ աւետարաններ, յայտնի ու անյայտ սրբերի և սրբատեղիների պաշտամունքը: Մեր եկեղեցին այժմ ամենայն հանգստութեամբ հանդուրժում է այդ բոլորին և թոյլ է տալիս, որ աւելի նիւթական առարկաները պաշտուին, իբրև առանձին զօրութիւնների բնակարաններ, քան թէ կենդանի Աստուածը: Այդպիսի հանդուրժողութիւնը սակայն ամենամեծ նախատինքն է թէ եկեղեցու և թէ հոգևորականութեան համար: Եւ վերջապէս՝ ժամանակ է, որ մենք մտածենք այդպիսի կռապաշտութիւնը, կրօնի անիմիստական և ֆէտիշիստական ժամանակի մնացորդները, արմատախիլ անել մեր ժողովրդի միջից, գոնէ բուռն կերպով աշխատենք արմատախիլ անել: Սովորոյթի մասին չողդիցանք երկար կանգ առնել, գրքոյկի ծաւալը չափից աւելի չ'ստուարացնելու համար: Բայց ռըքան այդպիսի հեթանոսական սովորութիւնների մնացորդներ կան մեր մաշտոցների մէջ, որ նոյնպէս հիմնական բարեփոխութեան կարօտ է: Ապացոյցի համար բաւականանք նոցանից մի քանիսը թուելով. 1) կանոն գիշերային ժամու աղօթից, որ կատարի ի վերայ ծանր հիւանդաց, ի բժշկութիւն ցաւոց և ի քաւութիւն յանցանաց. 2) կանոն խաչալուալ առնելոյ, որ կոչի խաչահանգիստ, ի բժշկութիւն ամենայն ցաւոց մարդկան և հօտից, բուսոց և տնկոց: Եթէ օրհնած ջուրը «Հօտը և խաչինք արբցեն, եղիցինոցա յանցաւութիւն և ի ծննդականութիւն»: Եթէ բոյսերի վրայ սրակենք, «եղիցին անմլասելի ի ժանգոյ, ի թրթրոյ և յամենայն պատահարաց». 3) կանոն դժուարած լին յղի կնոջ. 4) կա-

նոն փարատելոյ զառն նորածին մանկանց. 5) կանոն նոր հայ օրհներոյ. 6) ժամհար (զսնգակ) զչեստ, գիրք և այլն օրհներոյ կանոն. 7) կանոն Զրհոր օրհներոյ. 8) կանոն նորոգ սափրելոյ զհերս պատանւոյն և այլն և այլն:

Այս կարգերը կատարելն է դարձել իսկապէս մեր այժմեան քահանայութեան պարտաւորութիւնը. բայց քրիտոնէական եկեղեցին չի կարող թոյլ տալ, որ հայ քահանաները այդպիսի բաներով զբաղուին և կարմիր աւետարանի ու հրաշագործ պատկերների մոտի պաշտամունքը տարածեն մեր ժողովրդի մէջ. այն էլ պաշտօնապէս, հոգևոր վարչութիւնների թոյլտուութեամբ և խրախուսանքով: Մենք այլևս չենք կարող թոյլ տալ և չ'պիտի թոյլ տանք, որ հայ հոգևորականները կարկուտ կապկուտ և անձրև բերելով զբաղուին: Այդպիսիները չեն կարող մինչև անգամ քրիստոնեայ համայնքի անդամ լինել, զոր մնաց թէ հովիւ և առաջնորդ. որովհետև լուսաւորութիւն տարածողը չի կարող հմայն ու կախարդը լինել: Շատ են դժբախտաբար մեր հոգևորականների մէջ այդպիսիները, բայց լուրջ և սխտեմատիկական կերպով առաջ մղուած երկարատև աշխատանքն ու գործունէութիւնը կարող կ'լինեն այդ անպատիւ բիծն էլ մաքրել մեր եկեղեցու վրայից:

Վերջին խնդրին անցնելուց առաջ համառօտակի յիշատակենք նաև, թէ ինչ դրութեան է հասկնալուում եկեղեցական «խորհուրդների» ըմբռնումն ու կատարումը: Նօթն խորհուրդներից վերջինը՝ «Հիւանդների օժուում» մեր եկեղեցում ամենևին գոյութիւն չ'ունի այժմ, իսկ արդեօք և թնչ չափով եղել է այն առաջ, այդ էլ անյայտ է: Մնացածներից «ապաշխարութիւն»-ը կորցրել է իւր նշանակութիւնը. հաղորդութեան մասին վերև արդէն խօսք եղաւ, մկրտութիւնն ու զրոշմը դարձել են լոկ ձևականութիւն, որովհետև կատարուում են երեխայի նկատմամբ, որին ոչինչ ուսուցանել կարելի

չէ, այն ինչ մկրտութեան «կանոնը» պահանջում է, որ նախ սովորեցնեն «երեսայ»-ին քրիստոնէական եկեղեցու ուսումնն ու կեանքը: Աւելի լաւ դրութեան չեն պսակն ու ձեռնադրութիւնը: Եկեղեցական պսակի ազդեցութիւնն ու ոյժը հետզհետէ աւելի և աւելի կորչում է: Եւ ուրիշ կերպ լինել չի կարող, քանի որ եկեղեցու ազդեցութիւնը վերև նկարագրած հանգամանքների շնորհիւ ընկել է և ժողովրդի մէջ քրիստոնէական բարոյական կեանք առաջ բերելու մասին մտածող ու հողացող չ'կայ: Պօսեմնք այլևս ձեռնադրութեան մասին, ձեռնադրութեան խորհրդի միտքն այն է, թէ նորա միջոցով ձեռնադրեալը ստանում է Սուրբ Հոգու շնորհը: Սակայն եթէ մենք այդ պնդենք էլ, ո՞վ կ'հաւատայ, թէ մեր հոգեւորականութեան մէջ Սուրբ Հոգին է իշխում և տգէտ եպիսկոպոսների ձեռնադրած բոլոր տգէտ քահանաները Սուրբ Հոգու շնորհն ունին: Այս բոլոր պակասութիւնները հետևանք են այն բանի, որ իսկական քրիստոնէական կեանքի ձգտումը միտած է մեր եկեղեցում: Իսկ ուր կեանքի ձգտումը մեռնում է, այնտեղ մի պակասութիւնը ծնող է դառնում միևսի և նրանք շարունակ աւելանում են: (Որովհետև ձեռնադրութեան մասին խօսեցինք, չենք կարող առանց յիշատակութեան թողնել նաև այն սոսկալի հակաքրիստոնէական սովորութիւնը, որով մեր եկեղեցում հանդիսապէս նշուվում են ուրիշ գաղափարի տէր մարդիկ, որոնք հերետիկոս կամ հերձուածող անունն են կրում: Ի՞նչպէս պէտք է հաշտեցնել այդ սովորութիւնը «Սիրեցէք զթշնամիս ձեր» պատուէրի հետ, ես չ'զիտեմ և չեմ կարծում, թէ որ և է մէկը կարողանայ անել այդ՝ առանց անմիտ սովորութեան: Վրդովեցուցիչ է այս խնդրում՝ նաև այն, որ այլ կերպ մտածողներին նղովող ս. հայրերը ո՞չ մի պարզ գաղափար չունին, թէ ո՞ւմ և ինչո՞ւ համար են նղովում: Այդպէս՝ կ'գտնէք նղովեալների շարքում տպուած խոշոր տառերով Տիո-

ըխտոսին, որ անշուշտ Դիոգոր Տարսոնացին է։ Անունն անգամ ուղիղ չեն տպել և չ'զիտեն, բայց նզովելը անխուսափելի պարտք են համարում։ Ուրիշների անունը տալն այլ ես կարեւոր չենք համարում, որովհետեւ կարծում ենք, թէ սկզբունքով խնդիրը բոլորովին պարզ է, որ ոչ ոք ինզովիլու իրաւունք չունենք։ «Մի դատէք, զի մի դատիցիք»։ Հապա հպիսկոպոսական երդումը։ Աւետարանում ասած է՝ «ամենեկին մի երդնուցուս»։ Իսկ մեր եպիսկոպոսացուներից ոչ միայն բանաւոր, այլ և զբաւոր երդումն է պահանջում և ստացում։

Այս բոլոր թերութիւններն ու պակասութիւնները վերացնելու հոգսը ամենից առաջ ծանրանում է եկեղեցու առաջնորդական կամ եպիսկոպոսական իշխանութեան վրայ։ Իսկ եթէ նա անընդունակ գտնուի հասկանալու ճշմարտութիւնն ու ըմբռնելու ժամանակի պահանջը, այն ժամանակ կ'մնայ դիմել կենդանի եկեղեցուն՝ ժողովրդին, որ վեր կենայ և մարքէ Սիոնը ապականիչներից ու աւազակներից։

2.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Սրանով հասնում ենք դարձեալ եկեղեցու նուիրապետութեանը, որի գրութիւնը, ինչպէս վերեւ նկարագրեցինք, շատ ողբերգական է և դժուարին։ Բացի վերեն այլ առթիւ յիշածներից, այստեղ պէտք է շեշտենք, որ Հայոց եկեղեցու նուիրապետութիւնը գտնւում է բացարձակ քայքայուած և կազմալուծուած վիճակի մէջ։ Նա անգոր է, ուժասպառ և անբովանդակ դարձած։ Տեղն է յիշել Սորենացու խօսքը, որ շատ լաւ բնորոշում է Հայոց աշխարհի կարգերը. «Զի ոչ կարգք ինչ լեալ աստ յայտնի, և ոչ մեհենից պաշտամունք. և ոչ գլխաւորաց աշխարհիս առաջինն յայտնի է և ոչ վերջինն, և ոչ այլ ինչ օրինաւոր, այլ

խառն ի խուռն ամենայն և վայրենի» (Պո-
րեն. Ա. 9):

Այստեղ էլ, ինչպէս նախորդ խնդիրներում, ելք
դնել հնարաւոր է միայն պատմական զարգացումն
ըմբռնելով: Հայոց բարձրագոյն կամ կուսակրօն
հոգեւորականութիւնը ծանր ճգնաժամի մէջ է այսօր.
այդ արեւի նման պարզ է նշաններն ըմբռնել կարողա-
ցողի համար: Այդ ճգնաժամի պատճառները վերեւ մեծ
մասամբ արդէն նկարագրուեցան և ընդհանուր կեր-
պով ցոյց արուեցին այն միջոցները, որոնցով հնարա-
ւոր է ճգնաժամը մեղմացնել, գուցէ նաեւ բոլորովին վե-
րացնել: Ամենածանր խնդիրն այստեղ մեր կարծիքով
այն է, որ կուսակրօն հոգեւորականութիւնը ինքնըստ-
ինքեան, իրերի բնական բերմունքով մահուան է դա-
տապարտուած, այն պարզ պատճառով, որ հասկացող,
ինտելիգենտ տարրերը այժմ խոյս են տալիս այդ կո-
չումից և չեն կարող այլ կերպ վարուել, քանի որ ե-
կեղեցու դրութիւնը չի փոխուել ժամանակակից հաս-
կացողութեան համաձայն. հակառակ դէպքում նոքա
մտած կլինեն մի լծի տակ, որ բոլորովին օտար է ի-
րենց համար և ուր բացարձակ անկեղծութիւն
է հարկաւոր կեղծ չ'երևալու համար:

Ով որ դեռ ևս կասկածում է, թէ կուսակրօն հո-
գեւորականութեան վերջն եկել է, այդպիսիների աչքը
բաց անելու և կատարուած իրողութիւնը ցոյց տալու
համար, կարեւոր ենք համարում դնել հետեւեալ ստա-
տիստիկան.

Յայտնի է, որ Ռուսահայոց բարձրագոյն հոգե-
ւորականութիւնը էջմիածնի միաբանութիւն կոչուած
խառնիճաղանճ, այլազան տարրերից կազմուած կու-
սակրօն եկեղեցականներն են: Այդ «միաբանութիւն»-ից
են ընտրուում կաթողիկոս, առաջնորդ, յաջորդ, գործա-
կալ, սինոդի անդամ և այլն: Վերջին տասն տարուայ
ընթացքում այդ միաբանութեան մէջ տեղի է ունեցել

հետևեալ փոփոխութիւնը: 1898 թուին էջմիածնի միաբանութիւնն ունէր ընդամենը 92 անդամ (արքեպիսկոպոս, եպիսկոպոս, վարդապետ և սարկաւազ): Տասն տարի յետոյ՝ 1908 թուին էջմիածնի միաբանութիւնն հաշոււմ էր ընդամենը 67 անդամ, ուրիշն պակասել էր 25 հոգի: Դրա վրայ պէտք է աւելացնենք այն, որ 1898—1904 դեռ բաւական թուով նոր մարդիկ մտել են, այն ինչ 1905 թ. սկսած ոչ ոք մտած չէ և յոյս էլ չ'կայ, թէ կ'մտնեն: Այն ինչ շարունակ դուրս են գալիս և պիտի դուրս գան: Այդպէս՝ միայն 1909 թուականին դուրս են եկել կրկին 3 հոգի, մեռել է մէկը, որով միաբանութեան թիւն իջնում է 63 հոգու: Իսկ այդ 63 հոգուց՝ մօտաւորապէս կէսը անընդունակ է գործի կամ ծերութեան կամ անպատրաստութեան պատճառով: Սա մի այնպիսի լիզու է, որ չեն կարող չ'հասկանալ նոյն իսկ մեր «ի ծնէ» կոյրերն ու խուլերը: Մանաւանդ որ զրութիւնն այլ չէ նաև Տաճկահայաստանում, ուր նոյնպէս զգացւում է պատրաստուած և պիտանի բարձրագոյն հոգևորականութեան մեծ կարևորութիւն: Ի՞նչու յանկարծ այդպիսի զրութեան մէջ ընկաւ հայոց բարձրագոյն հոգևորականութիւնը:

Եկեղեցական պատմութիւնը մեզ ուսուցանում է, թէ ի՞նչ պայմանների արդիւնք է կուսակիցն վանականութիւնը քրիստոնէական եկեղեցու մէջ: Աշխարհից ձանձրացած, նրա չարիքներից փախչող հին աշխարհի մարդիկ, մի կողմից փիլիսոփայութեան, միւս կողմից հեռաւոր արեւելքի կրօնների ազդեցութեամբ խոյս են տուել զէպի անապատները, այնտեղ միաբանութեան մէջ գտնելու իրենց հոգին և իրենց Աստծուն, այնտեղ սրբաւայել կեանքով փառաւորելու Աստծու անունը: Այժմեան մարդը դրա հակառակ՝ սիրում է կեանքն ու այս աշխարհը, և նրա հասկացողութեամբ Աստծուն փառաւորել կարելի է միայն գործնական

կհանքի մէջ աւետաշանական ճշմարտութիւնների, եղբայրսիրութեան համար կռիւ մղելով և մարդկութեան սոցիալական վերանորոգութեան համար աշխատելով: Եւ արդի մարդը այդ նոյն ուղղութիւնը պահանջում է նաեւ իրեն առաջնորդելու կոչուածից: Մեծամեծ, տիեզերական պատմութիւնն յեղաշրջող դէպքեր են պատրաստում մարդկութեան կհանքի մէջ երրորդ և չորրորդ դասակարգների մրցմամբ ու հետզհետէ աւելի և աւելի կատաղի կռուով: Ի՞նչ պէտք է անէ քրիստոնէութիւնը այդ պայքարի ժամանակ և ի՞նչ է նրա դերը. նա պէտք է տիրող դասակարգի հետ միացած կռուի մարդկութեան ճնշուած մասի արդար պահանջների դէմ, թէ՞ պէտք է վերստին յիշէ, որ Յիսուսը աղքատների, թշուառների և ճնշուածների բարեկամն էր, որ քրիստոնէական կրօնը իւր սկզբնաւորութեան օրերում և դեռ երկար ժամանակ առաւելապէս խեղճերի կրօնն էր և իբրեւ այդպիսի նուաճեց ամբողջ աշխարհը: Ահա այն հարցերը, որ կարող են արդի մարդուն զբաղեցնել, եթէ նա առհասարակ կրօնի մասին մտածում է: Այդպիսի համաշխարհային հարցերի առաջ ի՞նչ նշանակութիւն կարող է ունենալ ճգնաւորների և կհանքից բեղաբաժների իդէալը իրենց անհատական երջանկութեան մասին: Իսկական քրիստոնեան մեր օրերում չի կարող ճգնաւորների նման Աստծուն սիրելու և ընկերին սիրելու պատուէրները միմեանցից բաժանել:

Բացի այդ՝ մի ժամանակ այդ կուսակրօն ճգնական կհանքը համարուել է աւելի սուրբ, աւելի Աստուածահաճոյ կհանք: Այսօր դրա մասին խօսք լինել չէ կարող, ոչ միայն այն պատճառով, որ այժմ ոչ ոք, և այն էլ իրաւամբ, չի հաւատում կուսակրօն «ճգնաւորների» սրբութեանը, այլ գլխաւորապէս նրա համար, որ իսկական սրբութիւնը մեր հասկացողութեամբ այս ու այն արտաքին բա-

բիքի արգելքը չէ, այլ սրտի սրբութիւնը: Բնական է, որ այս հասկացողութիւնների տիրապետութեան շնորհիւ կուսակրօնութիւնը իւր ոտքի տակի հողը կորցնէր. և մենք յիրաւի տեսնում ենք, որ այդ այդպէս է և քանի գնայ՝ դրութիւնը շատ աւելի պիտի ծանրանայ:

Ի՞նչ պէտք է անել ուրեմն, որ այս խիստ ճգնաժամն էլ յաջող և եկեղեցու համար օգտակար լուծումն ստանայ: Մեր կարծիքով պատասխանը պարզ է. ինչ որ ներկայ հասկացողութիւններին անհամապատասխան է և կրօնի համար էլ անտարբեր է, ուրեմն ո՛չ մի նշանակութիւն չունի, պէտք է վերացնել և նրա տեղ աւելի կենսունակ, ժամանակի պահանջներին աւելի համապատասխան բան դնել: Ի՞նչ է կախուած օրինակ բարձրագոյն հոգևորականութեան ամուսնացած ու կուսակրօն լինելուց. և միթէ մեր եկեղեցին իւր պաշտօնապէս «կուսակրօն» եպիսկոպոսութեամբ աւելի լաւ դրութեան մէջ է, քան Անգլիական եկեղեցին իւր ամուսնացած եպիսկոպոսներով:

Շատ կրթուած մարդիկ կան, որոնք խորապէս հետաքրքրւում են կրօնական խնդիրներով և կ'կամենային մեծ մասնակցութիւն ունենալ նոցա մէջ: Բայց այդպիսիներին յետ են կասեցնում, բացի վերև յիշուած պատճառներից նաև այնպիսի, կրօնի տեսակէտից աննշանակ բաներ, որպիսին կուսակրօնութիւնն է կամ հոգևորականի տարօրինակ զգեստը: Հարցն ուրեմն այստեղ այն է, թէ պէտք է հետամուտ լինենք պահելու անցեալի նշանակութիւնը կորցրած ժառանգութիւնը ի փնաս կրօնի, թէ ընդհակառակը՝ կրօնի օգուտն ի նկատի առնելով պէտք է այնքան ոյժ և աջարջութիւն ունենանք, որ ըմբռնենք, թէ դէպի ուր է գնում ընդհանուր շարժումը, որպէսզի ըստ այդմ էլ, յարմար ժամանակը ձեռքից բաց չ'թողնելով—ընդհանուր հո-

սանքին դէմ, թէ նրա համաձայն—կարգաւորենք մեր գործերը:

Չի կարելի ասել, թէ մեզնում այս բանը չեն հասկանում. բայց այն տարօրինակ կարծիքն է իշխում, թէ թող կուսակրօն հոգևորականութիւնը ինքն իրեն վերջանայ, մենք էլ ինչո՞ւ ձեռք տանք: Այդպէս մտածողները մոռանում են, որ եթէ մենք յարմար ժամանակին փթածը, անպէտքը մի կողմ դնենք և ժամանակի հետ գնանք, այն ժամանակ շատ բան կարող ենք դիտ պահել անցեալի ժառանգութիւնից, որ մեզ համար էլ թանգագին է: Իսկ եթէ թողնենք, որ ժամանակը իւրն անէ, կամ ինչպէս ասում են, ինքն իրեն վերջանայ, որպէսզի մենք մեր գլուխը չ'յոգնեցնենք մտածելով, հետեանքն այն կ'լինի, որ ոչ միայն անհետ կ'կորչի մեր պինդ բռնած անօգուտ ժառանգութիւնը, այլ և կործանումը աւելի մեծ կ'լինի, քան թէ մենք կարող ենք հրեակայել: Յիսուսի խօսքերով ասեմ, մենք պէտք է արթուն լինենք, հսկենք, թոյլ չ'տանք, որ ժամանակը յանկարծակիի բերէ մեզ և իւր ուղածն անէ, քնն հասցնելով մարդկութեան ամենաթանգագին գանձին՝ կրօնին. չէ՞ որ այդ չի կարող լինել մեզից ոչ ոքի ցանկութիւնը: Պէտք է ի նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ մեր ընդհանուր շարժման դէմ յամոռն ու «հայրերի աւանդը» ամուր պահելու կոյր ձգտումը կարող է այն քնասակար հետեանքն ունենալ, որ մենք գուցէ արուեստական միջոցներով, տգէտների, անպէտքների և կեանքից բեղարածների առաջ լայն բաց անելով կուսակրօն հոգևորականութեան դռները, կարող կ'լինենք առ ժամանակ առնել վերջնական ճգնաժամի առաջը, բայց դրանով էլ կ'ուռեժէ կրօնը և քրիստոնէական գործը, որովհետև, ինչպէս ասացինք, այդպիսի նշանակութիւն չ'ունեցող արգելքների պատճառով եռանդուն, գործունեայ և կրթութեամբ արդիկ եկեղեցական բարձրագոյն պաշտօնէութեան

մէջ չհին մտնի, այն ինչ միայն այդպիսիները կարող են իրազործել եկեղեցու քաղաքակրթական և լուսաւորչական նպատակները և նրա ազդեցութիւնը կրկին զօրացնել ժողովրդի մէջ:

Վերև առաջարկուած բարեփոխութիւնների անմիջական հետևանքը կ'լինի ինարկէ նաև եկեղեցական վարչութեան հիմնական փոփոխութիւնն ու նոր կազմակերպութիւնը: Պատմական հանգամանքներն այնպէս են բերել, որ մեր այժմեան եկեղեցական կազմակերպութիւնը բացարձակ միապետական է: Վճռական խնդիրներում բոլորս պարտաւոր ենք հնազանդել առանց այլևայլութեան, եթէ ուզում ենք դեռ ևս կամ կարող ենք նոյն եկեղեցու մէջ մնալ, մի անհատի որոշման: Բայց արտոլիւտիզմը, ինչպէս ամեն տեղ, այնպէս էլ յատկապէս եկեղեցու մէջ բացարձակապէս ֆիասակար է և վտանգաւոր, որովհետև պահանջում է մարդուց այնպիսի բաներ, որ ոչ մի իրաւունք չունի պահանջելու: օրինակ՝ բացարձակ հնազանդութիւն նաև վարդապետութեան խնդիրներում, ուրեմն սեպական բանականութեան և մտածողութեան ոչնչացումն, որ անկարելի է: Միապետականութեան վնասակարութիւնը եկեղեցում ակնյայտնի կացուցանելու համար բաւական է յիշենք, որ օրինակ եկեղեցական վերանորոգութեան խնդրում ևս մենք կապուած ենք այդ մի անձնաւորութեան կամքից ու ըմբռնումից, գոնէ առ այժմ: Եթէ նա անընդունակ է ըմբռնելու խնդրի լրջութիւնը և անկարող դործի ձեռնարկելու, խնդիրը բնականաբար ֆիաս կ'կրէ: Այդպէս չէր լինի, եթէ եկեղեցական միապետութիւն գոյութիւն չունենար. որովհետև խնդիրը կեանքի հասունացած պահանջ լինելով՝ իւր բնական ուղիով կ'ընթանար և կ'լուծուէր: Մենք չենք ուզում այստեղ բացատրել, թէ ինչպէս է առաջ եկել բացարձակ միապետութիւնը քրիստոնէական եկեղեցու մէջ: Այսքանը միայն կասենք, որ սկզբում քրիստո-

նշական եկեղեցու կաղմակերպութիւնը այդպէս չի եղել: Իւրաքանչիւր համայնք կառավարուել է անկախօրէն իւր երէցներով, աւագ անդամներով, որոնք դեռ միապետութիւն առաջ գալուց յետոյ էլ երկար ժամանակ պահել են իրենց խորհրդակցական ձայնը և միշտ նշանակութիւն են ունեցել համայնքի վերաբերեալ խնդիրները լուծելիս: Միայն այժմ է, որ համայնքը համարեա թէ իրաւազուրկ է հռչակուած իրեն վերաբերեալ խնդիրների նկատմամբ:

Այդպիսի կրաւորականութիւն արդի, ժամանակակից մարդը ընդունել կարող է մեր ներդրածական դարում: Բացարձակ հեղինակութիւնների շրջանն ևս անցել է վաղուց. և մենք իրաւունք ու պարտք ունինք պահանջելու, որ ժողովրդապետական սկզբունքը լաւագոյն մտքով իշխող լինի ժողովրդական եկեղեցու մէջ և մեզ վերաբերեալ խնդիրները առանց մեր մասնակցութեան ու խորհրդի այսուհետև ոչ ոք իրաւունք չ'համարէ վճռել: Իւրաքանչիւր առանձին համայնք իւր ներքին գործերի իրաւատէրն է. իսկ ընդհանուր եկեղեցական խընդիրները անհատները չեն կարող վճռել, այլ միայն ընդհանուր եկեղեցական ժողովը: Այդ սկզբունքով պիտի վերանորոգուի մեր եկեղեցական քայքայուած կաղմակերպութիւնը:

Մենք ընդհանուր գծերով ասացինք այն, ինչ որ հարկաւոր է Հայոց եկեղեցուն: Պէտք է վերանան հոգեւորականների կամայականութիւնը, կախարդական և կռապաշտական կրօնը, դաւանանքների իշխանութիւնը, փարիսեցիական ձեականութիւնները, և Հայոց եկեղեցին պիտի հիմքից ի վեր վերանորոգուի և վերածնուի Յիսուսի աւետարանի հիման վրայ, առանց յապաղելու և առանց տատանուելու: Ահա մեր պահանջը և զգացած ծանր կարիքը:

Կարճամիտներն ու «Սիոնի պահապանները» ան-

հաւատարմութիւն կ'համարեն այդ դէպի հայրենի ժա-
ռանգութիւնը: Իսկ մենք առում ենք. այդպիսի պա-
հանջ անել ստիպում է մեզ մեր բուն սէրը դէպի
եկեղեցին ու կրօնը, որի զօրութեան խորտակումը
տեսնելով՝ ճմլւում է մեր սիրտը:

Այդ պատճառով էլ մենք յայտարարում ենք.
քրիստոնէական եկեղեցու թշնամին ու ան-
հաւատարիմը ոչ թէ նա է, որ վերածնու-
թեան կարիք է զգում ու պահանջում, այլ
նա, ով անշարժ կանգնած մնալ է ուղղում հայ-
րերի աւանդի վրայ, դրանով կանգնեցնել
կամենալով մարդկային մտքի և զգացմուն-
քի զարգացումը. որովհետեւ «Սովորութիւնը կամ
աւանդութիւնը առանց ճշմարտութեան միայն մի հին
մոլորութիւն է»:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

I

Նորին Ամենապատուութեան Տ. Տեղա-
կալի Հայրապետութեան Ասենայն Հա-
յոց, Գէորգ արքեպիսկոպոսի Սուրե-
նեան:

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ՄԻԱԲԱՆ ԵՐՈՒԱՆԴ
ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻՑ

յայտարարութիւն.

Ձերդ Ամենապատուութեան գրաւոր և բանաւոր
հրամանների համաձայն՝ Արարատ ամսագրի Հոկտեմ-
բերի տետրակից հանուեցին և կրակի մատնուեցին իմ
«Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը» վերնա-
գրով յօդուածի թերթերը: Որ և իցէ բացատրութիւն
կամ հիմք մատնանշուած չէր Ձեր թղթերի մէջ. մը-
նում է ինձ ենթադրել, որ Ձերդ Ամենապատուութիւնը
իմ յօդուածը անհամապատասխան է գտել Հայաստա-
նեայց եկեղեցու վարդապետութեանը և անյարմար՝
Մայր Աթոռի պաշտօնական ամսագիր Արարատի մէջ
տպագրուելու համար: Իմ համեստ կարծիքը, սակայն,
այն է, որ Հայոց եկեղեցու ոգուն թմենէին դէմ լինել
չի կարող քրիստոնէական կրօնի հիմնական սկզբունք-
ները պարզելը և եկեղեցական կեանքի համար օգտա-
կար և անհրաժեշտ բարեփոխութիւններ առաջարկելը:
Մանաւանդ թէ՛ ամեն քրիստոնէական եկեղեցու ոգուն
դէմ է բռնի միջոցներով ազատ խօսքն արգելելը. իսկ
գրուածքներ այրելը դէպի միջնադարեան խաւարն է
տանում:

Ինչ միջոցներով պէտք է իրականանայ Հայոց ե-
կեղեցու հիմնական վերանորոգութիւնը, որի կարեքն

այսօր ակնյայտնի է լուրջ քրիստոնէական եկեղեցու և կրօնի մասին լուրջ կերպով մտածողների համար, եթէ արգելւում է մինչև անգամ այդ խնդրի մասին խօսելը: Եւ թէ Եւրոպայի ձեռնհաս սրտացաւ կերպով եկեղեցու կարիքներն ու վէրքերը բաց անելու և բուժելու միջոցներն առաջարկելու, եթէ ոչ նոյն եկեղեցու ուխտեալ սպասաւորը: Մենք չենք կարող անուշադիր լինել, որ ժամանակի շարժումն առաջ է դնում, առանց մեզ հարցնելու, և այդ շարժման շնորհիւ հանդէս եկած լուսաւորութիւնը օտարացնում է եկեղեցուց ու քրիստոնէական կրօնից թէ մտաւորականներին և թէ հասարակ ժողովրդին: Միթէ քրիստոնէական եկեղեցու պարտքը չէ ընդառաջ գնալ ընդհանուր շարժմանը և առաջնորդ հանդիսանալ ժողովրդին՝ մտքերի համատարած շփոթութեան մէջ: Այդպէս է հասկացել քրիստոնէական եկեղեցին իւր նպատակը մինչև այժմ. և սրանից յետոյ էլ ուրիշ կերպ լինել կարող չէ: Քրիստոնէական եկեղեցին հետամուտ չ'պէտք է լինի կեղևը անփոփոխ պահպանելու, եթէ դրանով վտանգ է սպառնում կորիզին: Այժմ ճգնաժամի մէջ է մեր եկեղեցին, ընդհանուր քրիստոնէութեան հետ միասին, այդ կեղևն յաւիտենական և անփոփոխ համարելու և պահպանելու պատճառով: Եւ այն մարդիկ, որոնք պարզ կերպով տեսնում են վտանգը, չեն կարող և իրաւունք չունին լռելու, անտարբեր ականատես լինելով եկեղեցու անկման ընթացքին:

Այդ շարժառիթներից դրդուած՝ ևս սրբազան պարտականութիւն համարեցի սոյն թուի Արարատի Մայիս-Յունիս և Հոկտեմբեր համաընկերում իմ կարծիքներս ու մտածմունքներս արտայայտել, մանաւանդ որ Ձերդ Ամենապատուութեան յատուկ յանձնարարութեամբ նոյն ամսադրում տպուեց նաև հակառակ ուղղութեան մի յօդուած, «Բացակայ միաբան» ստորագրութեամբ, որ ամեն ինչ անփոփոխ պահպանելու ցան-

կութեամբ էր տողորուած: Ինքնըստինքեան խնդիր է առաջ դալիս ուրիմն՝ թէ ռոն է այն չափը, որով պիտի չափուին Արարատում տպուելիք յօդուածները: Վերջին կարգադրութիւնները պարզում են, որ ազատ մտածելն ու արտայայտելը Հայոց եկեղեցու շրջանակի մէջ արգելւում է նրա պաշտօնեաներին և սահմանւում է անշեղ կերպով հետեւել դարերից մեզ ժառանգութիւն մնացած, արդի աշխարհայեացքին ու կեանքին բոլորովին անհամապատասխան աւանդութիւններին ու կարգերին: Սակայն Ձերդ Ամենապատուութիւնն էլ անշուշտ կ'ընդունէ, որ այդպիսի արգելք կամ սահմանումն զնեւում իրաւունք ոչ որ չունի, քանի որ խնդիրը վերաբերում է ամբողջ Հայոց եկեղեցուն, իսկ Ի. դարում նրա միլիօնաւոր անդամներին համար Դ. կամ Ե. դարու աշխարհայեացքն ու կարգերը պարտադիր դարձնել ոչ միայն հնարաւոր, այլ և բանական չէ: Այնպէս որ, ի՞թէ Մայր Աթոռի «բացակայ միաբանը» Հայոց Հայրապետութեան պաշտօնական բերան «Արարատ» ամսագրի մէջ իւր հնադարեան հայեացքները պարզելու իրաւունք ունի, այդ նոյն իրաւունքից չի կարող զրկուած յայտարարուել մի այլ միաբան, որ արդի աշխարհայեացքի ներկայացուցիչ լինելով և Հայոց եկեղեցու իսկ շահն իւր սրտին շատ մօտիկ ընդունելով, հիմնական վերանորոգութիւն է պահանջում:

Այդ տեսակէտից բողոքելով Ձերդ Ամենապատուութեան Հայոց եկեղեցու շահերին անհամապատասխան կարգադրութեան դէմ, միևնոյն ժամանակ խնդրում եմ հաճիք միաբանական ժողով հրաւիրել, այդ խնդրի առթիւ խորհրդակցելու, որպէսզի պարզուի, թէ Ս. Էջմիածնի միաբանութիւնը ի՞նչ է մտածում եկեղեցական վերանորոգութեան մասին և արդեօք գայթակղւում է իրօք պաշտամունքի նկատմամբ իմ արած առաջարկներից. այն միաբանութիւնը, որին Ձերդ Ամենապատուութեան հրամանով անցեալ պատկի ա-

ւագ շարաթուն թուղթ էին ստորագրել տալիս, դոնէ այդ խորհրդաւոր օրերին եկեղեցի մտնելու: Իւր այդ ընթացքով արեւօք Ս. Էջմիածնի միաբանութիւնը դեռ ամիսներ առաջ չէ՞ ապացուցել իմ գրածների բացարձակ ճշմարտութիւնը: Ո՞րն էր ուրեմն իմ յանցանքը, և ինչո՞ւ համար կրակի լաժին դարձաւ իմ յօդուածը:

Ձերդ Ամենապատուութեան շուտափոյթ կարգադրութեանն սպասելով

Մնամ միաբան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
Երուանդ վարդապետ Տէր-Մինասեանց

14 Նոյեմբերի 1908

Ս. Էջմիածին

II

Նորին վեհափառութեան Տ. Տ. Մասթուսի, Սրբազնագոյն կաթողիկոսի ամենայն Հայոց

ՄԱՅՐ ԱԹՌՈՒԻ ՄԻԱԲԱՆ ԵՐՈՒԱՆԴ
ՎՈՐԴԱՊԵՏ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆԻՑ

Ամենախոնարհ լայտարարութիւն

Յայտնի է անշուշտ Ձերդ Վեհափառութեանը, որ անցեալ 1908 թուականի Նոյեմբեր ամսի սկզբին՝ ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոս Սուրենեանի կարգադրութեամբ, Մայր Աթոռի պաշտօնական «Արարատ» ամսագրի Հոկտեմբերի տետրակից հանուեցին և կրակի մատնուեցին իմ «Հայոց եկեղեցու վերանորոգութեան խնդիրը» վերնագրով յօդուածի թերթերը: Ի՞նչ շարժառիթներից դրդուած և ռւմ խորհրդով արեց նա այդ միջնադարեան, հայ քրիստոնէական ազատախոհ եկեղեցուն ան-

Ջնջելի արատ բերող կարգադրութիւնը, անկարելի եղաւ այնուհետեւ իմանալ, թէ և ես, իբրեւ տուժող, գրաւոր բողոք ներկայացնելով նորին Ամենապատուութեան՝ Տ. Տեղակալին, խնդրեցի միաբանական ժողով հրաւիրել, որպէսզի պարզուի, թէ Ս. Էջմիածնի միաբանութիւնն ի՞նչ է մտածում եկեղեցական վերանորոգութեան մասին և արդեօք գայթակղւում է իրօք իմ արած առաջարկներէց, ինչպէս ինքը Տ. Տեղակալն յայտնել է բերանացի։ Տ. Տեղակալը խոյս տուեց միաբանական ժողով հրաւիրելուց և այդպիսով խնդիրը ֆնայ առկախ մինչև այսօր՝ մինչև Չերդ վեհափառութեան հայրապետական աթոռ բազմելը։

Բայց այս խնդիրը այնպիսի խնդիրներէց է, որոնք սկզբունքի տեսակէտից ամենամեծ նշանակութիւն ունին եկեղեցու համար և այդպէս առկախ, առանց պարզ և որոշ լուծման ֆնալ չեն կարող։ Իրաւունք ունի՞ն Հայոց եկեղեցու պաշտօնեաները ազատ կերպով մտածելու և արտայայտելու իրենց կարծիքները եկեղեցական կարևոր, բարեփոխութեան կարօտ խնդիրների մասին, թէ՞ ոչ ոք պիտի ճակուտէ միայն անշիղ կերպով հետեւել անցեալ դարերից ժառանգութիւն մնացած, արդի աշխարհայեացքին ու կեանքին բոլորովին անհամապատասխան աւանդութիւններին ու կարգերին։ Ամենայն Հայոց հայրապետութեան տեղակալը չ'կամեցաւ ինձ այդ հիմնական հարցի պատասխանը տալ, թէ և նա իւր կարգադրութեամբ արդէն արգելել էր ազատ մտածողութիւնն ու նրա արտայայտութիւնը Հայոց եկեղեցու մէջ և իրեն համար պարզ պիտի լինէր, թէ ի՞նչ է իւր ասելիքը։

Այդ պատճառով՝ բողոքելով Տ. Տեղակալ Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի Հայոց եկեղեցու շահերին միանգամայն անհամապատասխան կարգադրութեան և

նրանից յետոյ ցոյց տուած անտարբեր վերաբերմունքի դէմ, դիմում եմ Ձերդ Վեհափառութեան արդարադատ վճռին, խնդրելով ամենախոնարհաբար, որ Ամենայն Հայոց Հայրապետդ իւր հեղինակաւոր ձայնը լսելի առնէ ամբողջ հոգեւորականութեան և ժողովրդի առաջ, սրբէ Հայոց եկեղեցու վրայից Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի թողած անպատուաբեր բիծը, յայտարարելով, որ Հայոց եկեղեցու վարդապետը իրաւունք և սրբազան պարտականութիւն ունի մտածելու և զրկելու եկեղեցական կարիքների մասին և ոչ ոք իրաւունք չունի բռնի միջոցներով՝ դանակով ու կրակով ազատ միտքը կաշկանդելու:

Պատիւ ունիմ սրա հետ Ձերդ Վեհափառութեանը ներկայացնելու իմ վէճի առարկայ դարձած յօդուածները (Արարատ, Մայիս-Յունիս և Հոկտեմբեր 1908 ամի) և Տ. Տեղակալի անունով 1908 թուի Նոյեմբերի 14-ին տուած բողոքի պատճէնը, որպէսզի Ձերդ Վեհափառութիւնն անձամբ համոզուի, թէ որչափ անիրաւացի է եղել Տ. Տեղակալի կարգադրութիւնը:

Սպասելով Ձերդ Սրբութեան իմաստուն վճռահատութեանը

Մնամ խոնարհ որդի Երուանդ վարդապետ
Տէր-Մինասեանց

Միաբան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի.

Զ-ն Յուլիսի 1909 ամի


Ս. Էջմիածին




Ես ոչ մի պատասխան չ'ստացայ մինչև այսօր. խնդիրը քնացրին. բայց դորա հետ կապուած բոլոր խառն կարեւոր հանգամանքների մասին ես շուտով տեղիք հունենամ յառաջաբանում խոստացած նոր գլորոյկի մէջ մանրամասն պատմելու և մի շարք վաղուհիքների ծայրը բաց անելու:

ՍՏՈՒԳ-ԼԱՅ

Ա





[12]

A ¹¹ 67411

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

Թ. 4.

1. Die armenische Kirche in ihren Beziehungen zu den syrischen Kirchen bis zum Ende des 13 Jahrhunderts. Leipzig 1904 4 —
2. Des hl. Irenäus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung (Կարապետ եպիսկոպոսի հետ միասին). հայերէն և գերմաներէն. Leipzig 1907 3 —
3. Նոյն գրքի գերմաներէն թարգմանութեան Բ. հրատարակութիւնը. Leipzig 1908 — 80
4. Բաբելոն և Սուրբ Գիրք. էջմիածին 1908 . — 15
5. Ընդ. Եկեղեցական Պատմութիւն Ա. Հին եկեղեցին. էջմիածին 1908 1 25
6. Տիմոթէոսի Աղէքսանդրացոյ Հակաճառութիւն Քաղկեդոնի (Կարապետ եպիսկոպոսի հետ միասին). էջմիածին 1908 4 —
7. Կրօնի և Կրօնի գիտութեան էութիւնը ըստ Տրեռլի. էջմիածին 1907 — 25
8. Վերանորոգութեան կարիքը Հայոց եկեղեցու համար. էջմիածին 1908 — 10
9. Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիներին հետ. էջմիածին 1908 . . . 1 50
10. Կրօնների պատմութիւն. էջմիածին 1909 . 1 50
11. Յիսուսի կեանքը. էջմիածին 1909 . . . — 30
12. Իրենիոսի «Ընդդէմ Հերձուածոց» գիրք Դ. և Ե. Leipzig 1910 4 —

Սոյն գրքի գինն է 25 կոպէկ